«Այս պահին բանակցություններին նպաստող գործոններից մեկն այն է, որ երկու կողմերն էլ համաձայնության են եկել մնացած հարցերից ամենավիճահարույցի՝ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքի» շուրջ: Փոխադարձ համաձայնությամբ որոշեցինք հանել այս կետը խաղաղության համաձայնագրից և տեղափոխել քննարկումն ավելի ուշ փուլ... Այսպիսով, մենք որոշեցինք հանել այն տեքստից, բայց դեռ կարող ենք արտացոլել փաստը, որ այն հարցերից մեկն է, որին երկրները կարող են վերադառնալ ապագայում՝ քննարկելու և համաձայնության գալու համար»: (Ադրբեջանի նախագահի ներկայացուցիչ Էլչին Ամիրբեկով):

**Չորեքշաբթի**
**14 օգոստոսի 2024թ.**
**№ 14 (623)**

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի: ԳԻՆԸ՝ 100 ԴՐԱՄ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru

ISSN 1829-3468

# Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am




## **Թե ինչպես Գորիս-Կապան-Ճակատեն ճանապարհը հայտնվեց Ադրբեջանի տիրապետության ներքո,** իսկ Սյունիքի արևելյան սահմանի մեր դիրքերը հանձնվեցին թշնամուն

Ամուլում հայտնվել է հուշագիրը, որի համաձայն որոշվել է Գորիս–Կապան–Ճակատեն ճանապարհի ճակատագիրը, որի համաձայն 2020 թ. դեկտեմբերի 18-ին Սյունիքի արևելյան սահմանի մեր դիրքերը հանձնվել են Ադրբեջանին: Ստորև՝ հուշագրի հայերեն և ռուսերեն տարբերակները:

**Հուշագրի հայերեն թարգմանությունը**

Հուշագրի առաջին հոդվածում նշվում է, որ «հայկական կողմը 2020 թ. դեկտեմբերի 18-ին դուրս է հանում իր զինված կազմավորումները Ադրբեջանի Զանգելան և Կուբաթլու շրջաններից»:

**Երկրորդ հոդվածը** սահմանում է, որ Գորիս-Դավիթ Բեկ-Կապան-Ճակատեն ավտոճանապարհի անվտանգությունն ապահովում են ՀՀ-ն և ԱՀ-ն՝ համապատասխանաբար այն տարածքներում, որոնք նրանց տիրապետության տակ են:

**Երրորդ հոդվածի համաձայն՝** երկու կողմերը երաշխավորում են մարդկանց, տրանսպորտի, բեռների անվտանգությունն այդ ճանապարհներին, երաշխավորում այլ զինված կազմավորումների բացակայությունը, խաղաղ բնակչության անվտանգությունը:

***Շարունակությունը՝ էջ 2***

## Սյունիքը դարպասն է. Կոպիրկինը՝ Իրանի հետ Հայաստանի և ԵԱՏՄ մյուս երկրների առևտրի մասին

**Ռուսաստանի կառավարությունը հուլիսի 1-ին հրաման է արձակել Կապանում գլխավոր հյուպատոսություն բացելու մասին: Թե ինչպես է ընթանում գործընթացը և ինչ խնդիրներ պետք է լուծեն ռուս դիվանագետները, Sputnik Արմենիային պատմել է Հայաստանում արտակարգ և լիազոր դեսպան Սերգեյ Կոպիրկինը:**

**– Սերգեյ Պավլովիչ, սկզբի համար պարզաբանենք՝ ինչո՞վ է պայմանավորված Հայաստանի հարավում դիվանագիտական հաստատություն բացելու նախաձեռնությունը:**

– Հայկական կողմը, այդ թվում՝ ամենաբարձր մակարդակում, ի սկզբանե ողջունել է Կապանում գլխավոր հյուպատոսություն հիմնելու մտադրությունը՝ այն բնութագրելով որպես վաղուց հասունացած և պահանջված: Այս պահին մենք միասնական ջանքերով զգալի առաջընթաց ենք գրանցել այն բացելու հարցում: Առաջ անցնելով՝ կցանկանայի նշել, որ հայկական կողմի ցանկություններին համապատասխան՝ Ռուսաստանի կառավարության որոշմամբ նախատեսվում է պարզեցված սխեմայով գլխավոր հյուպատոսության բացում՝ առանց մեր պրակտիկայում ընդունված համաձայնագրի կնքման, որն արվում է

***Շարունակությունը՝ էջ 3***

***Տգիտություն, եսականություն և աշխարհաքաղաքացիություն - ահա երեքը հայրենասիրության անհաշտ թշնամիներից:***

*Գարեգին Նժդեհ*

## **Արցախահայության հավաքական վերադարձի հարցը՝** միջազգային հանրության ուշադրության կենտրոնում

**ՀՀ արտաքին գործերի նախկին նախարար Վարդան Օսկանյանը կրկին անդրադարձել է Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված արցախահայերի՝ Արցախ վերադառնալու իրավունքին, ինչպես նաև արցախահայերի իրավունքների առաջմղման համար ստեղծված հատուկ հանձնախմբի աշխատանքներին: Հրապարակված տեսանյութում Վարդան Օսկանյանն այս ամենի առնչությամբ, մասնավորապես, ասում է.**

*«Վստահ եմ՝ տեղյակ եք, որ նախորդ տարվա դեկտեմբերի 2-ին Արցախի ԱԺ-ն մի որոշմամբ ստեղծեց հանձնախումբ, որին լիազորվեց արտերկրում պաշտպանել արցախահայության հիմնարար իրավունքները: Այդ հանձնախումբը ղեկավարում եմ ես, ավելի ճիշտ, դրա կոորդինացումը դրվել է ինձ վրա:*

*Հանձնախումբը պաշտոնապես բաղկացած է 7 հոգուց, այնտեղ կան ներկայացուցիչներ Հայաստանից, Արցախից, Լատինական Ամերիկայից, Եվրոպայից, Միացյալ Նահանգներից: Բայց սա պաշտոնական երևացող մասն է, այս հարցի շուրջ կան ավելի լայն համախոհներ, որոնք ներկայացնում են տարբեր աշխարհամասեր, այնտեղ կան ներգրավված անձինք՝ Ռուսաստանից, Միջին Արևելքից և այլ երկրներից: Հարցի շուրջ կա օտարազգիների բավականին գործունյա, նախկինում դիվանագիտական աշխատանք ծավալած և այսօր էլ դեռևս միջազգային քաղաքականության մեջ ներգրավված մարդկանց մի լայն խումբ:*

*Հանձնախումբն արդեն հինգ ամիս աշխատում է: Բազմաթիվ հանդիպումներ են եղել, այցեր ու հանդիպումներ են եղել Փարիզում, Բրյուսելում, Մոսկվայում, Միացյալ Նահանգներում: Ընդամենը վերջերս՝ հուլիսի կեսերին, հանձնախմբի երեք ներկայացուցիչներով այցելեցինք Ժնև և Շվեյցարիա:*

*Ժնևում ընթանում էր ՄԱԿ մարդու իրավունքների խորհրդի հերթական տարեկան նիստը: Այնտեղ մասնակցություն ենք ունեցել, օգտագործելով առիթը՝ հանդիպել ենք տարբեր երկրների ներկայացուցիչների հետ, ՄԱԿ-ի տարբեր կառույցների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև շվեյցարական կողմի, Ժնևի համայնքի պատգամավորների հետ: Ասեմ, որ այդ այցելությունը բավականին արդյունավետ էր: Ուզում եմ հենց դրանով նաև ամփոփել, որովհետև դա ամփոփում է մինչ այդ ունեցած մեր հանդիպումները և այդ հանդիպումների տրամաբանությունը, ինչպես նաև մյուս կողմի արձագանքները: Դրանք ամփոփված են Ժնևի և ՄԱԿ-ի կառույցներում և անհատ երկրների ու շվեյցարական կողմի հանդիպումների մեջ:*

*Կենտրոնանամ դրա վրա, հանգեմ մի քանի եզրակացությունների և այդ բոլորն ուզում եմ համալրել մի այլ վկայակոչությամբ, որը մի քանի օր առաջ Հարավային Կովկասում*

***Շարունակությունը՝ էջ 2***

# **Արցախահայության հավաքական վերադարձի հարցը՝** միջազգային հանրության ուշադրության կենտրոնում

***Սկիզբը՝ էջ 1***

*ԵՄ հատուկ ներկայացուցչի՝ Տոյվո Կլաարի հարցազրույցն է, որը բավականին լայն տարածում է ստացել Հայաստանում: Այնտեղ նա արտահայտում է որոշ մտքեր, որոնք ամբողջությամբ համընկնում են և գալիս են վկայակոչելու այն, ինչը ես եմ ասելու, և համարվելու է իմ եզրակացությունները հատկապես արցախահայության՝ իրենց հայրենիք միջազգային երաշխիքներով հավաքական վերադարձի հարցի կապակցությամբ:*

*Այդ հարցազրույցը վկայակոչեցի, որպեսզի այն, ինչը ես եմ ասելու մեր հանդիպումների արդյունքների հետ կապված, չթվա սուբյեկտիվ, որովհետև Տոյվո Կլաարի ասածը, հիմնավորումն ամբողջությամբ համընկնում է այն ամենին, ինչը ես եմ ասելու»:*

Վարդան Օսկանյանի խոսքով՝ ընդհանուր դրական տրամադրվածություն կա արցախահայության՝ միջազգային երաշխիքներով Արցախ հավաքական վերադարձի հարցի շուրջ:

*«Ցանկացած տեղ այս հինգ ամսվա ընթացքում, որ մենք դիմել ենք հանդիպման համար, մերժում գրեթե չենք ստացել, կարծեք թե բոլորը տեղյակ են այս հանձնախմբի գոյության մասին: Ընդունում են հանձնախմբի գոյությունը, համարում են, որ արտերկրում այս հանձնախումբն իսկապես ներկայացնում է արցախահայության ձայնը, և ուզում են լսել այդ ձայնը՝ որպես այլընտրանք: Այն, ինչը նրանք լսում են իրենց երկկողմ հանդիպումներում Ադրբեջանի կամ Հայաստանի իշխանությունների հետ: Այդ ցանկությունն իսկապես կա:*

*Պարզ է, իրենք իրենց «կանալներն» ունեն Հայաստանի ներսում, Արցախի ղեկավարության, ժողովրդի հետ, որոնք այսօր բնակվում են Հայաստանում: Բայց ամեն դեպքում արտերկրում այս հանձնախմբի ասածը բոլորի համար լսելի է, և ուզում են դրան լուրջ վերաբերվել, որպեսզի տեսնեն, թե ինչպես կարող են օգտակար լինել այս հարցն առաջ տանելու համար: Հանձնախումբն այսպես ընկալվում է, ընդունվում է և ինչպես ասացի՝ ցանկացած հանդիպում, որ մենք առաջարկել ենք, լինի երկկողմ թե ՄԱԿ-ի կառույցներում, բոլորն ընդառաջվել են, և մենք ունեցել ենք այդ հանդիպումները:*

*Եթե արցախահայության հավաքական վերադարձի հարցը միջազգային երաշխիքների ներքո Հայաստանի կողմից բերվի բանակցային օրակարգ, ապա այդտեղ կլինի միջազգային հանրության աջակցությունը: Ես սա ասում եմ ամենայն պատասխանատվությամբ: Ահավասիկ այստեղ է, որ ուզում եմ վկայակոչել Տոյվո Կլաարի ասածը, միանշանակ նա նույնն է ասում: Նա խոսում է Եվրամիության անունից և ասում է, որ Ադրբեջանը պարտավորություն ունի անդրադառնալու այս հարցին, և այս հարցը պետք է լինի օրակարգային:*

*Նա նաև մի հարց է տալիս և այդ հարցին պատասխանում է, դրա մասին ինքս հաճախ եմ խոսել:*

*Ասում է՝ այն, որ արցախահայերի վերադարձի դիմաց Ադրբեջանը չի կարող ադրբեջանցիների Հայաստան գալու, վերադառնալու խնդիր դնել, երկուսը միմյանց հետ բացարձակ կապ չունեն, դրանք գտնվում են երկու տարբեր հարթությունների վրա: Այնպես որ, դա կարելի է այլ հարթության վրա քննարկել, բայց արցախահայության վերադարձի խնդիրը, դա միանշանակ այսօրվա հրատապ, կարևորագույն խնդիրներից մեկն է:*

*Մեկ այլ եզրակացություն էլ ասեմ, որը Կլաարը բացահայտ չի ասում, բայց միանշանակ բոլոր գիտակից, այդ հարցին տեղյակ մարդկանց կողմից արձանագրվում է, որ Արցախի հարցը դեռևս լուծված չէ: Հստակ դիրքորոշումներ կան շատ կարևոր մարդկանց կողմից, որոնց ինքս ականատես եմ եղել, երբ ասում են, որ, եթե Ադրբեջանին թվում է, որ Արցախի հարցը ռազմական ճանապարհով լուծել է՝ չարաչար սխալվում է:*

*Արցախի հարցը դեռևս լուծված չէ այնքան ժամանակ, քանի դեռ արցախահայության միջազգային երաշխիքներով, նրանց իրավունքները վերականգնելով՝ իրենց տներ վերադառնալու հարցերը չի լուծվել: Մնում է այս հարցը բերել օրակարգ:*

*Ամենայն պատասխանատվությամբ եմ ասում, կոչ եմ անում արցախահայությանը, հայ ժողովրդին առհասարակ, այս հարցն աչքաթող մի արեք, սա մեր պատասխանատվության խնդիրն է, ՀՀ իշխանությունների պատասխանատվությունն է: Արցախահայությունը, հայ ժողովուրդը նման ճակատագրի է արժանացել ՀՀ այսօրվա իշխանությունների սխալների պատճառով:*

*Եկեք թույլ չտանք նրանց, որ այդ սխալները շարունակեն կամ այդ սխալներն արդարացնելու համար ուղղակի այս հարցը տան մոռացության, իրենց ճակատից այդ խարանը մաքրելու համար 150,000 արցախահայերի ճակատագրի հետ չխաղան, մեր ժողովրդի ճակատագրի հետ չխաղան: Ասում եմ՝ այսօր ռեալ հնարավորություն կա արցախահայության բոլոր իրավունքները միջազգային երաշխիքներով վերականգնել, իրենց տներ վերադարձնել: Այս հարցը ՀՀ իշխանությունը պետք է բերի օրակարգ, և արցախահայերը, հայ ժողովուրդը պետք է պահանջատեր լինեն առաջին հերթին՝ ՀՀ իշխանություններից, նրանք պարտավոր են հարցը բերել օրակարգ:*

*ՌԴ-ն, ԵՄ-ն, Միացյալ Նահանգները, բոլորն ասում են՝ հարցը բերեք օրակարգ, դա հրապարակային չեն ասում, որովհետև դիվանագիտական էթիկան մի քիչ դա չի ընդունում, բայց կուլիսային մեր հանդիպումներում ասում են՝ բերեք օրակարգ, կլինի աջակցություն:*

*ՀՀ իշխանություններն ուղղակի պարտավոր են այդ հարցը բերել բանակցային օրակարգ, և դա որևէ կերպ չի վտանգի ՀՀ տարածքային ամբողջականությունը կամ պատերազմի սպառնալիք չի լինի: Ընդհակառակը, նպաստելու է, օգնելու առավել կայուն խաղաղության հասնելու Հայաստանի և Ադրբեջանի միջև:*

*Կոչ եմ անում բոլորին, որպեսզի այս հարցը դարձնեն օրակարգային խնդիրներից մեկը և հետամուտ լինեն հարցի հետապնդմանը և պարտադրեն Հայաստանի իշխանություններին, որպեսզի այս հարցը բերեն բանակցային օրակարգ»,* – եզրափակեց Վարդան Օսկանյանը:

*Վարդան Օսկանյան*

*ՀՀ արտաքին գործերի նախարար 1998-2008թթ.*

# **Թե ինչպես Գորիս-Կապան-ճակատեն ճանապարհը հայտնվեց Ադրբեջանի տիրապետության ներքո,** իսկ Սյունիքի արևելյան սահմանի մեր դիրքերը հանձնվեցին թշնամուն

***Սկիզբը՝ էջ 1***

**Չորրորդ հոդվածով՝** ՌԴ ԱԴԾ սահմանապահ մարմինները ապահովում են ճանապարհներին անվտանգ շարժը և հետևում, որպեսզի կողմերը կատարեն ձեռք բերված պայմանավորվածությունները:

**Հինգերորդ հոդվածում** նշվում է, որ Ադրբեջանը ապահովում է հայկական բնակչության և բեռների տեղաշարժը Գորիս–Դավիթ Բեկ ճանապարհով և իրացնում այդ ճանապարհահատվածից օգտվելու՝ իր իրավունքը:

Վերջին հոդվածում էլ ասվում է, որ այս հուշագիրը 5 տարով է՝ և-ս 5 տարով երկարաձգելու հնարավորությամբ, եթե կողմերից մեկը ժամկետը լրանալուց 6 ամիս առաջ չի հայտնում այս դրույթը չերկարաձգելու մտադրության մասին:

Հուշագրի վերջին նախադասությունը. որպես լրացում՝ նշվում է, որ հայկական կողմը Կաֆան անվանումը փոխարինել է Կապան անվանումով: Այս փաստաթղթում ամենուրեք օգտագործվում է ոչ թե հայկական Կապան անունը, այլ՝ Կաֆան:

**Հուշագրի բնօրինակը՝ ռուսերեն տարբերակը**

**МЕМОРАНДУМ**

**об организации безопасного движения граждан, транспортных средств и грузов по автомобильным дорогам ГОРИС - ДАВИД-БЕК и КАФАН-ЧАКАТЕН**

Во исполнение пункта 9 Заявления Президента Азербайджанской Республики, Премьер-министра Республики Армения и Президента Российской Федерации от 9 ноября 2020 г., с целью обеспечения безопасного движения по дорогам: ГОРИС – ДАВИД–БЕК и КАФАН – ЧАКАТЕН стороны договорились о следующем:

1. Армянская сторона 18 декабря 2020 г. выводит свои вооруженные формирования с территории Зангеланского и Кубатлинского районов Азербайджанской Республики.

2. Одновременно с этим, в целях обеспечения безопасного передвижения лиц, транспортных средств и грузов на участках автомобильных дорог: ГОРИС – ДАВИД–БЕК от точки с координатами: 39 26’34.577” северной широты и 46 23’42.646” восточной долготы до точки с координатами: 39 19’56.032 северной широты, 46 28’03.157” восточной долготы, и КАФАН-ЧАКАТЕН до точки с координатами: 39 12’28” – северной широты, 46 24’18” восточной долготы до точки с координатами: 39 08’54,603” северной широты, 46 26’33.747” восточной долготы Пограничные войска Службы национальной безопасности Републики Армения на армянской территории, Государственная пограничная служба Азербайджанской Республики на азербайджанской территории на удалении от дорог, обеспечивающем визуальное и техническое наблюдение, выставляют пограничные наряды.

3. Армянская и азебайджанская стороны гарантируют безопасность передвижения лиц, транспортних средств и грузов по указанным дорогам, а в пределах от дорог до мест расположения пограничных нарядов отсутствие иных вооруженных формирований сторон, безопасность местного населения и пограничной инфраструктуры на своих территориях.

4. Пограничные органы Федеральной службы безопасности Российской Федерации обеспечивают контроль на дорогах за перемещением лиц, транспортных средств и грузов осуществляют обмен актуальной информацией и доведения до сторон необходимых требований с целью соблюдения достигнутых договоренностей.

5. Азербайджанская сторона гарантирует безопасное передвижение лиц, транспортных средств и грузов Армении по автомобилной дороге ГОРИС – ДАВИД–БЕК и реализует свое право по использованнию данного участка дороги от точки с координатами: 39 26’34.577”северной шираты, 46 23’42.646” восточной долготы до точки с координатами: 39 19’56.032” северной широты, 46 28’03.157” восточной долготы после предварительного информирования.

6. Срок действия данного меморандума – 5 лет с автоматическим продлением на очередные 5-летние периоды, если ни одна из Сторон не заявит за 6 месяцев до истечения срока о намерении прекратить применение данного положения.

**Примечание: армянская сторона заменила слово КАФАН на КАПАН**

***Հ.Գ.*** ***Տարածված փաստաթղթում չի երևում, թե ով է հայկական կողմից ստորագրել հուշագիրը: Սակայն, ըստ համացանցում տարածված տեղեկությունների, հուշագիրը մեր կողմից ստորագրել է ՀՀ պաշտպանության՝ այդ օրերի նախարար Վաղարշակ Հարությունյանը:***

# ՀՀ-ի ՀԱՊԿ-ից դուրս գալը կփոխի ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում՝ ուժեղացնելով Ադրբեջանի, Թուրքիայի և Արևմուտքի դերերը. The Jamestown Foundation

ՀԱՊԿ-ից դուրս գալուց հետո Երևանի հաջորդ քայլը մնում է անորոշ, գրել է The Jamestown Foundation-ը: Ըստ վերլուծության՝ Հայաստանը հարավկովկասյան միակ երկիրն է, որը Ռուսաստանի գլխավորած Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) անդամ է: Եթե Հայաստանը ցանկանա ամբողջությամբ անջատվել Ռուսաստանից, ապա տնտեսական անկախության հարցում բազմաթիվ խոչընդոտներ կունենա: Հայաստանի տնտեսության կարևոր ոլորտները, ինչպիսիք են էլեկտրաէներգիան, գազը, հեռահաղորդակցությունը և երկաթուղային տրանսպորտը, փոխանցվել են Ռուսաստանին 2003 թվականին՝ Մոսկվային Երևանի կուտակած 100 միլիոն դոլար պարտքի դիմաց:

Դրանից հետո Հայաստանի տնտեսական կախվածությունը ՌԴ-ից ավելի է մեծացել, ինչը Մոսկվային տվել է քաղաքական ազդեցություն: Փաշինյանը դեռ պետք է հաղթահարի ներքաղաքական մարտահրավերները՝ ՀԱՊԿ-ից պաշտոնապես դուրս գալու հարցում: Սակայն հաջողության դեպքում՝ պարզ չէ, թե ո՞ր գործընկերների մոտ կգնա Երևանը՝ որպես Ռուսաստանի այլընտրանք: Ներկայիս տարբերակները տատանվում են Ֆրանսիայից և ԱՄՆ-ից մինչև Իրան և Հնդկաստան: Նման դեր խաղալուն ամենապատրաստը, կարծես, Ֆրանսիան է, որն աջակցություն ունի ԱՄՆ-ում:

Հայաստանի և Ֆրանսիայի միջև վերջին պաշտպանական և ռազմական համաձայնագրերը կարող են վկայել, որ Երևանը վերակողմնորոշում է երկրի արտաքին քաղաքականությունը դեպի Արևմուտք:

Իրանը կարող է հուսալի և կայուն այլընտրանք լինել Հայաստանի համար: Թեհրանն անցանկալի է համարում Ռուսաստանի հետ Հայաստանի հարաբերությունների թուլացումը և ՀԱՊԿ-ից հնարավոր հեռանալը, քանի որ նման գործողությունները կարող են թուլացնել Իրանի, Հայաստանի և Ռուսաստանի չգրված դաշինքը և մեծացնել Արևմուտքի և ՆԱՏՕ-ի ազդեցությունը Հարավային Կովկասում: Այս փոփոխությունները կտրուկ կփոխեն ուժերի հավասարակշռությունը Հարավային Կովկասում՝ ի վնաս Իրանի և Ռուսաստանի և ի շահ Ադրբեջանի, Թուրքիայի և Արևմուտքի:

Այս պայմաններում՝ եթե Հայաստանը դուրս գա ՀԱՊԿ-ից, Իրանը կփորձի սերտ հարաբերություններ պահպանել իր միակ քրիստոնյա հարևանի հետ: Հայաստանի հետ 40 կիլոմետրանոց սահմանի պահպանումը Իրանի համար ռազմավարական առաջնահերթություն է: Վերջին երեք տասնամյակների ընթացքում այս սահմանի անվտանգության պատասխանատուն ռուս սահմանապահներն էին: Եթե այդ ուժերը դուրս բերվեն Հայաստանից, Իրանը կնախընտրեր, որ դրանք չփոխարինվեն օտարերկրյա այլ ուժերով, և հայ սահմանապահները տեղակայվեին այդտեղ:

Հնդկաստանն ու Հայաստանը ևս վերջին տարիներին ընդլայնել են ռազմական և պաշտպանական համագործակցությունը: Հնդկաստանը, սակայն, դժվար թե հարմար այլընտրանք լինի Ռուսաստանին, քանի որ Նյու Դելին սերտ հարաբերություններ է պահպանում Մոսկվայի հետ: Հնդկաստանը նաև մասնակցում է Հյուսիս-Հարավ միջազգային տրանսպորտային միջանցքին Իրանի, Ադրբեջանի և Ռուսաստանի հետ, իսկ Նյու Դելին հույս ունի համեմատաբար ավելի հավասարակշռված մոտեցում ցուցաբերել Հարավային Կովկասի նկատմամբ: Ավելին՝ Հայաստանի, Իրանի և Հնդկաստանի միջև եռակողմ համագործակցությունը կենտրոնացնում է ջանքերը տարածաշրջանում Ադրբեջանի, Թուրքիայի և Պակիստանի եռակողմ կապերի դեմ «կոշտ հավասարակշռման» փոխարեն «փափուկ հավասարակշռության» վրա:

Հայաստանի ռազմավարական հեռացումը Ռուսաստանից նշանակում է աշխարհաքաղաքական դիրքորոշման փոխակերպում: ՀԱՊԿ-ից դուրս գալու Երևանի որոշումը կյանքի կոչվելու պարագայում, պարադիգմային փոփոխություն է ոչ միայն երկրի, այլև՝ ավելի լայն Հարավային Կովկասի համար: Դա կարող է հիմնովին փոխել քաղաքական ուժերի դասավորվածությունը և ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում՝ պոտենցիալ նվազեցնելով ռուսական ազդեցությունը, միաժամանակ ուժեղացնելով Ադրբեջանի, Թուրքիայի և Արևմուտքի դերերը:

**07.08.2024**

# Սյունիքը դարպասն է. Կոպիրկինը՝ Իրանի հետ Հայաստանի և ԵԱՏՄ մյուս երկրների առևտրի մասին

*Սկիզբը՝ էջ 1*

նոտաների փոխանակման միջոցով:

Մենք այժմ հետագա քայլեր ենք ակնկալում նաև հայ գործընկերներից՝ հաշվի առնելով դիվանագիտական պրակտիկայում ընդունված հավասարության և փոխադարձության սկզբունքը: Ինչպես հայտնի է, Հայաստանում մենք ունենք մեկ գլխավոր հյուպատոսություն՝ Գյումրիում, այն դեպքում, երբ մեր գործընկերները հյուպատոսական ներկայացուցչություններ ունեն Սանկտ Պետերբուրգում և Դոնի Ռոստովում՝ չհաշված երկու գրասենյակները Նովոսիբիրսկում և Վլադիկավկազում, ինչպես նաև վեց պատվավոր հյուպատոսները Վոլգոգրադում, Կալինինգրադում, Պերեսլավ-Զալեսկում, Նիժնի Նովգորոդում, Տյումենում, Եկատերինբուրգում:

Ռուսաստանը տրամադրված է ակտիվորեն ընդլայնել դիվանագիտական ներկայությունը բարեկամ երկրներում և բացել նոր դիվանագիտական և հյուպատոսական առաքելություններ այն պետություններում, որոնք տեղակայված են Ռուսաստանի համար առանցքային տարածաշրջաններում (արտաքին քաղաքականության նոր հայեցակարգին համապատասխան): Նման պետությունների թվում է, իհարկե, նաև Հայաստանը:

**– Այժմ ի՞նչ փուլում է հյուպատոսություն բացելու աշխատանքը:**

– Այնտեղ արդեն անցյալ տարվանից աշխատում է Ռուսաստանի ԱԳՆ-ի առաջատար խումբը՝ գլխավոր հյուպատոսություն բացելու համար: Դրա կազմում ընդգրկված դիվանագետներն աշխատանքային ամուր կապեր են հաստատել Սյունիքի մարզպետարանի և առանցքային քաղաքների քաղաքապետների, գիտական և կրթական շրջանակների, հասարակական կազմակերպությունների հետ: Տեղի բնակիչներն անկեղծ հետաքրքրություն են ցուցաբերում խմբի կողմից անցկացվող մարդասիրական միջոցառումների նկատմամբ:

Դրանց թվում են երեխաներին նվերներ բաժանելը, դպրոցականների համար ռուսերեն շարադրությունների մրցույթը, արվեստի տեղական քոլեջում, երկրագիտական և պատմական թանգարաններում մշակութային ակցիաները, հյուպատոսական հարցերով բնակչության համար սեմինարները: Նման զգայուն տարածաշրջանում դիվանագիտական ներկայության ընդլայնումը, ի թիվս այլ բաների, նպատակ ունի նվազեցնել Հարավային Կովկասի կոնֆլիկտային ներուժը, որը պահպանվում և մշտապես սնվում է արտաքին խաղացողների կողմից:

Այս գործում մենք ունենք համախոհներ. 2022 թվականից այստեղ գործում է Իրանի գլխավոր հյուպատոսությունը, որի հետ աշխատանքային կապեր են հաստատվել, այդ թվում՝ Մոսկվա-Երևան-Թեհրան եռանկյունում փոխգործակցության զարգացման ուղղությամբ: Ռուսաստանի գլխավոր հյուպատոսությունը հայ-իրանական սահմանները հսկող ՌԴ սահմանապահների հետ միասին լրացուցիչ ներդրում կունենա հանրապետության անվտանգության և տարածքային ամբողջականության ապահովման գործում:

**– Իրանի հետ ԵԱՏՄ-ի մերձեցումը, որտեղ այժմ նախագահում է Հայաստանը, պետք է անդրադառնա Սյունիքի սոցիալ-տնտեսական վիճակի վրա: Ո՞ր ոլորտներում և ուղղություններով կարելի է ակնկալել առավել շոշափելի օգուտներ:**

– Իսկապես, Սյունիքում ռուս դիվանագետների աշխատանքը կնպաստի մեր երկրների միջև առևտրատնտեսական կապերի զարգացմանը, այդ թվում նաև ԵԱՏՄ ձևաչափում: Սյունիքի մարզը «դարպաս» է Իրանի հետ Հայաստանի և միության առևտրի համար: Այստեղով է անցնում հանրապետության համար կարևոր նշանակություն ունեցող «Հյուսիս-հարավ» միջազգային տրանսպորտային միջանցքի հատվածը: Ինչպես հայտնի է, ռուսական կողմն աջակցում է այդ մայրուղու կառուցմանը:

Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի գծով ֆինանսական աջակցության ծավալը կազմում է 150 մլն դոլար: Եվրասիական տարածաշրջանի տրանսպորտային համակարգի զարգացման գործում իր ներգրավվածության մասին հայտարարել է նաև Եվրասիական զարգացման բանկը: Տարածաշրջանում գործում են ռուսական ընկերություններ և տեղական մասնակցությամբ կառույցներ:

Կարծում եմ, որ լրացուցիչ խթան կհաղորդվի երկկողմ միջտարածաշրջանային համագործակցությանը և մշակութայինհումանիտար կապերի ամրապնդմանը: Տարածաշրջանում ապրում է մինչև 1000 ՌԴ քաղաքացի: Գործում են ռուսաց լեզվի ուսումնասիրման մի շարք կենտրոններ: Կապանում գործում է Ռուսական գրքի տուն: Ռոսստրուդնիչեստվոյի ներկայացուցչությունը Երևանում կազմակերպել էր ռուսաց լեզվի դասընթացներ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի Կապանի մասնաճյուղի դասախոսների համար:

Ռուսաստանի մի շարք վարչական շրջանների կողմից ակտիվորեն մշակվում է Սյունիքի մարզի համայնքների հետ գործընկերային հարաբերությունների հաստատման նախաձեռնությունների շարք: 2023 թ. հունիսի 16-ին Կապանում ստորագրվել են մտադրությունների մասին համապատասխան արձանագրություններ Ուրայ և Մեղրի, Սեստրորեցկ և Գորիս քաղաքների միջև: Ընդհանուր առմամբ, ռուս-հայկական հարաբերությունների ամրապնդման ուղղությամբ աշխատանքները բավականին շատ են:

**– Սյունիքի նկատմամբ վերջին շրջանում անկեղծ հետաքրքրություն են ցուցաբերում արևմտյան քաղաքական գործիչներն ու դիվանագետները: Ամերիկացի պաշտոնյաների գրեթե յուրաքանչյուր այց ենթադրում է ուղևորություն Հայաստանի հարավային շրջաններ: Ի՞նչ եք կարծում, ո՞րն է տարբերությունը ռուսական մոտեցման և արևմտյան «գործընկերների» աշխատանքի մեթոդների միջև:**

– Ի դեպ, ինչ էլ որ ասեն չարակամները, ռուս դիվանագետները հաստատ չեն պատրաստվում «լրտեսել» Սյունիքում՝ ի տարբերություն տարածաշրջանում հեռադիտակներով շրջելու արևմտյան սիրահարների: Օրակարգում չկա նաև «Զանգեզուրի միջանցքի» ստեղծումը, ինչը նույնպես փորձում են վերագրել Մոսկվային: Հարավային Կովկասում տրանսպորտային և տնտեսական կապերի ապաշրջափակման հարցերով, ինչպես հայտնի է, զբաղվում է Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի փոխվարչապետերի գլխավորած եռակողմ աշխատանքային խումբը:

> *– Ի դեպ, ինչ էլ որ ասեն չարակամները, ռուս դիվանագետները հաստատ չեն պատրաստվում «լրտեսել» Սյունիքում՝ ի տարբերություն տարածաշրջանում հեռադիտակներով շրջելու արևմտյան սիրահարների:*

**17.07.2024**

# Կապանի միջազգային երաժշտական փառատոնն ավանդական է դառնում

Ինչպես մեկ տարի առաջ՝ փառատոնի բացումը տեղի ունեցավ հուլիսի 4-ին՝ Կապանի արվեստի պետական քոլեջի Վ. Ստամբոլցյանի անվան երգեհոնային դահլիճում՝ հովանավորությամբ և աջակցությամբ Կապանի համայնքապետարանի, Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի, Հայաստանի ԿԳՄՍ նախարարության և մի շարք գործընկերների:

Նախորդ փառատոնը նշանավորվեց «Sfeinway D-274» կարգի եզակի հնչողությամբ դաշնամուրի՝ կապանյան գրանցում ստանալով, որը տեղադրված է արվեստի պետական քոլեջի երգեհոնային դահլիճում: Այս անգամվա նորությունն այն է, որ փառատոնը նախաձեռնող և հիմնադիր Սևակ Ավանեսյանի նախաձեռնությամբ նորոգվեց դեռևս Արցախյան առաջին պատերազմի ժամանակ հրետակոծությունից տուժած երգեհոնը: Երգեհոնահարներ Գարրի Եփրիկյանի և Եգոր Ռուդոմյոտովի ամիսներ տևած աշխատանքի շնորհիվ երգեհոնը երկրորդ կյանք է ստացել: Արժանին մատուցվեց երգեհոնը վերանորոգած երգեհոնահարներին և հմուտ մասնագետներին: Երգեհոնի վերանորոգման հովանավորն են հայկական բարեգործական ընդհանուր միությունը ՀԲԸՄ և Viwa-ն:

Բարեմաղթանքի խոսքով հանդես եկավ Կապանի համայնքապետ Գևորգ Փարսյանը՝ ընդգծելով այն միտքը, որ մեկ տարվա պատմություն ունեցող փառատոնը հասցրել է ուրույն տեղ գրավել կապանյան մշակութային կյանքում, սիրվել հանրության կողմից և դառնալ սպասված երաժշտական տոնախմբություն:

Խորհրդանշական է, որ առաջին կատարումը հնչեց նորացված երգեհոնով: Միջազգային մրցույթի դափնեկիր երգեհոնահարուհի Իրինա Ռոզանովան հնչեցրեց Յոհան Սեբաստիան Բախի «Ֆանտազիա և ֆուգա սոլ մինոր» ստեղծագործությունը:

**4-18 ՀՈՒԼԻՍԻ 2024Թ.**

***Կապանի միջազգային երաժշտական փառատոն***

Կորեական ծագումով ամերիկացի ջութակահարուհի Էլլի Սունը կատարեց Ջորջ Վիդմանի «Էտյուդ մենանվագ ջութակի համար» գործը՝ առաջին անգամ Հայաստան բերված Ստրադիվարիուսի ջութակներից մեկով:

Ռոմանոս Մելիքյանի «Վարդը» ռոմանսը կատարեց սոպրանո Լիանա Ալեքսանյանը՝ նվագակցությամբ Մարիաննա Շիրինյանի (դաշնամուր):

Էդուարդ Բաղդասարյանի «Նոկտյուրնը» հնչեցրին Անդրեյ Գրիդչուկը՝ (ալտ), ում նվագակցում էր Աննա Սարկիսովան (դաշնամուր):

Տպավորիչ էր բելգիացի դաշնակահար Ժուլիեն Լիբերի կատարումը, երաժիշտը կատարեց Արտեմի Այվազյանի «Երևան» ստեղծագործությունը:

Համերգը եզրափակվեց Ռոբերտ Շումանի «Դաշնամուրային կվինտետ մի բեմոլ մաժոր» լայնակտավ ստեղծագործության կատարումով (Մարիաննա Շիրինյան՝ դաշնամուր, Հրաչյա Ավանեսյան՝ առաջին ջութակ, Էլլի Սու՝ 2-րդ ջութակ, Անդրեյ Գրիդչուկ՝ ալտ, Սևակ Ավանեսյան՝ թավջութակ), որ բուռն արձագանք առաջացրեց դահլիճում՝ չընդհատվող ծափողջույններով: Փառատոնի մեկնարկը տրված է տպավորիչ համերգով...

Այս անգամ ևս Կապան են այցելել համաշխարհային ճանաչում ունեցող երաժիշտներ: Փառատոնի շրջանակում կանցկացվեն վարպետաց դասեր, հետաքրքրական հանդիպումներ, համերգներից առաջ հարցեր կուղղվեն հանրաճանաչ երաժիշտ կատարողներին, կկազմակերպվի Ստրադիվարիուսի և Գվարներիի ջութակների ցուցահանդես:

Մի խոսքով՝ երկու շաբաթ Կապանը կապրի երաժշտական լիարյուն կյանքով:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Քանի որ շատ կապանցիներ հնարավորություն չունեն գնալ Լոնդոն, Բեռլին կամ Նյու Յորք, ուստի մենք աշխարհին ենք բերում Կապան.

## ՍԵՎԱԿ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Երկրորդ տարին անընդմեջ Կապանում տեղի է ունենում երաժշտական միջազգային փառատոն, որի արձագանքները սպասվածից ավելին են: Մասնագետներն այն համարում են կայացած երևույթ մեր մշակութային կյանքում, ինչը պատիվ և համբավ է բերում մեր երկրին ու նրա երաժշտասեր հանրությանը:

Փառատոնի կայացման գործում մեծ ներդրում ունի հիմնադիր, բելգիահայ թավջութակահար Սևակ Ավանեսյանը: Ծագումով կապանցի 35-ամյա մաեստրոն ծնվել է երաժիշտների ընտանիքում, ավագ եղբայրը՝ Հրաչյա Ավանեսյանը, հայտնի ջութակահար է, Եհուդի Մենուհին և Կառլ Նիլսեն մրցույթների առաջին մրցանակակիր, փայլուն ելույթներ է ունեցել բազմաթիվ երկրների հանրահայտ նվագախմբերի հետ: Արժանացել է նաև BBC-ի «Տարվա լավագույն կամերային երաժշտության ձայնագրություն» մրցանակին: Ավարտել է Բրյուսելի թագավորական կոնսերվատորիան, այնուհետև կատարելագործվել Մեծ Բրիտանիայում և Գերմանիայում: Այժմ Լոնդոնի և Փարիզի կոնսերվատորիաների պրոֆեսոր է: Հրաչյա Ավանեսյանը նվագում է 1864 թվականի Ջ. Բ. Վիլյոմ ջութակով:

Ավանեսյանների ընտանիքը Բելգիա է տեղափոխվել 2004 թվականին: Սևակն իր հերթին եղել է Բելգիայի Ազգային նվագախմբի թավջութակահարների խմբի կոնցերտմայստերը, հանդիսանում է Իզայիի անվան մրցույթի, Triomphe de l'Art և ՀԲԸՄ-ի մրցույթների ժյուրիի մշտական անդամ: Միջազգային փառատոնների դափնեկիր

է, մասնավորապես հաղթող է ճանաչվել Լյուքսեմբուրգի «Young Soloists», «Lions Club European Competition» և այլ մրցույթներում: Արժանացել է նաև Բելգիայի երաժշտական քննադատների «Golden Lable» և «Belgische Strichting Roeping» մրցանակներին: Նա նույնպես ավարտել է Բրյուսելի թագավորական կոնսերվատորիան՝ լինելով ամենաերիտասարդ շրջանավարտը, քանի որ ընդունվել էր 14 տարեկանում: Այնուհետև կատարելագործվել է Բեռլինում: Որպես մենակատար հանդես է եկել տարբեր երկրների հանրահայտ նվագախմբերի հետ՝ համագործակցելով հայտնի դիրիժորներ Հանս Գրաֆի, Հյու Վոլֆի, Անդրեյ Բորեյկոյի հետ: 2016 թվականին կայացավ Գոմես Շահբազյանի «Rhythm & Intervals» վավերագրական ֆիլմի պրեմիերան՝ նվիրված Սևակ Ավանեսյանին: Ֆիլմը մրցանակներ է շահել մի քանի փառատոներում: Մեծանուն երաժիշտը քսան տարի նվագել է 1689 թվականի Մատեո Գոֆրիլեր թավջութակի վրա:

«Արմենպրես»-ի հետ զրույցում Սևակ Ավանեսյանը նշեց, որ կապանյան փառատոնն ավելի շատ երևույթի մասին է, առավելապես ձգտել է իրեն դնել երկրորդ պլանում, քանի որ դա առաջին հերթին թիմային մեծ աշխատանքի արդյունք է, ինչին հասել են հիասքանչ մարդկանց համատեղ ջանքերի շնորհիվ:

*«Քանի որ նման փառատոն Հայաստանում երբևէ չէր անցկացվել, ուստի միշտ երազում էինք մեկ օր այն դարձնել իրականություն: Շատ հաճախ եմ շփվում ամբողջ աշխարհում հայտնի մեր հայրենակից երաժիշտների հետ: Ամեն անգամ հանդիպելիս քննարկում էինք նույն հարցը, թե ինչու Հայաստանում նման փառատոններ չեն կազմակերպվում: Երբ այցելեցի Կապանի արվեստի պետական քոլեջի դահլիճ, հասկացա, որ հենց այդտեղ էլ պետք է կազմակերպենք երաժշտական մեծ միջոցառում: Հանդիպեցի համայնքապետ Գևորգ Փարսյանն հետ և հինգ րոպեի ընթացքում որոշեցինք մեր բոլոր ընկերների և հովանավորների ջանքերը համատեղելով՝ հասնել արդյունքի»,–* մանրամասնեց անվանի ջութակահարը:

Նա հավելեց, որ մեծանուն երաժիշտներին Հայաստան բերելու հիմքում նախևառաջ անձնական կապերն են: Թեև նրանք Ավանեսյանի մտերիմ ընկերներն են, բայցևայնպես ժամանել են հանուն երաժշտության ու գաղափարի՝ սիրելով Հայաստանը և հայերին: Շատերն ունեն հայ ընկերներ, հարևաններ և միշտ երազել են այցելել մեր երկիր:

*«Նման միջոցառումների կազմակերպումը շատ դժվար է, կապված է մեծ ֆինանսների հետ: Չնայած հոգնեցուցիչ ճամփորդությանը՝ հյուրերը չտրտնջացին: Ավելին, նրանց առաջին տպավորությունները խոսքերով անհնար է նկարագրել: Անվանի երաժիշտներն ուղղակի երջանիկ էին և վայելում էին ժամանակը Կապանում: Աշխարհահռչակ այս վարպետներին հնարավոր չէ*

# Փառատոնին միացավ նաև ջազը

Հուլիսի 11-ին Կապանի արվեստի պետական քոլեջի Վահագն Ստամբոլցյանի անվան երգեհոնային դահլիճի բեմահարթակում ջազային քառյակն էր՝ Արթուր Սաթյան (դաշնամուր), Արման Մնացականյան (հարվածային գործիքներ), Էդգար Ավետիսյան (բաս կիթառ), Դավիթ Մելքոնյան (սաքսաֆոն): Մինչ համերգի սկսվելը Արթուր Սաթյանը և Արման Մնացականյանը պատմեցին, թե ինչպես մտան ջազային երաժշտության ոլորտ, նաև ներկայացրին կենսագրական տվյալներ:

Արթուր Սաթյանը սերվում է Սաթյանների երաժշտական ընտանիքից: 1990-ականներին Երևանի լավագույն դաշնակահարներից էր, 1996 թ. հրավիրվել էր Բեյրութ, 1998-ից դասավանդել է, ոգեշնչել տարածաշրջանի բոլոր երաժիշտներին: Ելույթներ է ունեցել հանրահայտ ջազմենների հետ:

Դահլիճում մոտ երկու ժամ հնչեց ջազային երաժշտություն, կատարվեցին նաև Արթուր Սաթյանի ստեղծագործություններից և մշակումներից:

Համերգի վերջում ջազային քառյակին միացավ կոլորիտային արտաքինով և նույնքան կոլորիտային երաժշտական գործիքով Մարիուս Պրեդան (Նիդերլանդներ), ով ամբողջական համերգով հանդես կգա:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Հազվագյուտ ջութակների ցուցահանդես Կապանի միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում

Հուլիսի 4-8-ը Կապանի արվեստի պետական քոլեջի նախասրահում փառատոնը նախաձեռնողների կողմից կազմակերպվել էր անտիկվար ջութակների ցուցահանդես: Ցուցադրված էին երկու Ստրադիվարիուսի և երեք Ջուզեպե Գվարների դել Ջեզուի հինավուրց ջութակներ:

Հուլիսի 8-ի առավոտից ջութակները պիտի տեղափոխվեին իրենց մշտական գտնվելու վայր՝ Լոնդոն: Իսկ մինչ հրաժեշտը Ֆլորիան Լեոնարդը, ով 1982 թվականից ղեկավարում է Florian Leonhard Fine Violins-ը ջութակի վաճառքով զբաղվող առաջատար ընկերություններից մեկն աշխարհում, անհրաժեշտ բացատրություններ տվեց հազվագյուտ այդ ջութակների պատրաստման, դրանց ստեղծման ժամանակաշրջանի, հնչողության մասին: Ընկերության գործունեության ուղղություններից են աջակցությունը տաղանդավոր երաժիշտ կատարողներին և երաժշտական փառատոներին, մանավանդ երիտասարդ երաժիշտներին, ովքեր վստահորեն իրենց տեղն են գտնելու երաժշտական աշխարհում:

Այնուհետև ջութակները տեղափոխվեցին բեմահարթակ, որտեղ ջութակահարներ Հայկ Կազազյանը, Հրաչյա Ավանեսյանը, Էլլի Սուն մեղեդիներ հնչեցրին հազվագյուտ այդ գործիքներից, դրանցով նվագելու հնարավորություն տրվեց մի քանի պատանի ջութակահարի: Հպարտություն կար նրանց դեմքերին, քիչ բան չէ նվագել մի գործիքով, որ պատրաստվել է 1727 թվականին: Իսկ դահլիճում գտնվողները վայելեցին երաժշտական այդ գործիքների կատարյալ հնչողությամբ մեղեդիները:

*«Կաշխատենք նորից գալ Կապան, ուրիշ գործքիներ բերել և հնարավորություն ընձեռել, որ համերգներին նաև մեր բերած գործիքներով նվագեն»,* – հրաժեշտից առաջ ասաց Ֆլորիան Լեոնարդը:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

# Ավարտվեց Կապանի միջազգային երաժշտական փառատոնը

Կապանի միջազգային երաժշտական փառատոնի վերջին ակորդն առավել քան տպավորիչ ստացվեց: Նախ՝ փառատոնի մասնակից 30 կապանցի պատանի երաժիշտներ ստացան կրթաթոշակներ «Միասին-org»-ից: Երախտագիտություն հայտնվեց այն մարդկանց և կազմակերպություններին, որոնք փառատոնի կազմակերպման ակունքներում էին և ովքեր նպաստեցին, որ երաժշտական տոնն իրականություն դառնա:

Այնուհետև բեմահարթակում էր գնչուական ջութակի վարպետ, ջազմեն և կոմպոզիտոր Ռոբի Լակատոշը: Մեծ վարպետի հետ բեմում էին նրա ընկերները՝ վիրտուոզ երաժիշտներ Լասլո Բոնին (ջութակ), Լասլո Ռազը (ցիմբալ), Գաբոր Լադանյին (կիթառ), Ռոբերտ Շակչին (դաշնամուր) և Վիլմոս Սիսկոշը (կոնտրաբաս):

Հանդիսատեսը մասնակիցը եղավ երաժշտական մի հրավառության՝ նախևառաջ խմբի ղեկավարի վիրտուոզ կատարման շնորհիվ: Նա ոչ միայն վառ վիրտուոզ է, այլև արտակարգ ոճական բազմազանությամբ երաժիշտ, ինչպես գրում են երաժշտական քննադատները և հավելում, որ Ռոբի Լակատոշը եզակի երաժիշտներից է, որ սահմաններից դուրս է: Նրան անվանում են գնչու ջութակահար կամ «սատանայի ջութակահար», դասական վիրտուոզ, ջազի իմպրովիզատոր, կոմպոզիտոր և գործիքավորող:

Կապանի արվեստի պետական քոլեջի երգեհոնային դահլիճից մտնելով նա սկսեց ջութակի նվագը և բեմ բարձրանալով՝ խմբին վարակեց իր կատարմամբ՝ բերկրանք պատճառելով հանդիսականին:

Դասական երաժշտությունը միախառնված էր հունգարական-գնչուական կենսախինդ մեղեդիների հետ: Ոչ մի երաժշտական համար չէր հայտարարվում, այլև անընդհատ դեպի հանդիսատեսի սիրտը հորդող երաժշտություն էր հնչում:

Բեմահարթակում, իրոք, բարձրակարգ ու վիրտուոզ կատարողներ էին: Բայց նաև անակնկալ էր սպասվում: Ընդմիջումից հետո բեմ բարձրացան Կապանի Արամ Խաչատրյանի անվան երաժշտական դպրոցի սան, սրնգահար Նարեկ Սարգսյանը, Կապանի թիվ 2 երաժշտական դպրոցի սան, դհոլահար Գագիկ Գասպարյանը և Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի 2-րդ կուրսի ուսանողուհի, թավջութակահարուհի Մարիա Արիստակեսյանը:

Պատանի երաժիշտները հետ չմնացին ավագ «գործընկերներից»: Կատարվեց, մասնավորապես, Վիտորիո Մոնտիի «Չարդաշը», իսկ ամենավերջում՝ Արամ Խաչատրյանի «Սուսերով պարը»՝ ինքնատիպ մեկնաբանությամբ:

Փառատոնը երկու շաբաթ հնարավորություն ընձեռեց կապանցիներին (և ոչ միայն) հաղորդակից լինել բարձրակարգ երաժշտության: Փառատոնը միավորեց նաև մարդկանց: Ուստի ապրենք այն հաճելի զգացողությամբ, որ այն ավանդական է դառնում, և առնվազն մեկ տարի հետո կրկին կլինի հանդիպում դասական անկրկնելի երաժշտության հետ:

**ՎԱՀՐԱՄ ՕՐԲԵԼՅԱՆ**

---

*զարմացնել փողով կամ շռայլությամբ, բայց միայն գաղափարով՝ հանուն երաժշտության ու հանդիսատեսի: Նրանք նույնիսկ հրաժարվում էին խորհրդանշական հոնորարներից՝ ամեն կերպ նպաստելով նման փառատոնի կայացմանը»,* – ասաց մեր զրուցակիցը:

Հանրահայտ հյուրերը մեծ կարծիք են հայտնել նաև հայաստանյան երաժիշտների, հատկապես պատանի կատարողների մասին և հաճույքով անցկացրել վարպետության դասեր: Նրանք տպավորված տաղանդաշատ պատանի երաժիշտների կատարումներից:

*«Այս ամենն իրականում արվում է հաջորդ սերնդի համար: Քանի որ շատ կապանցիներ հնարավորություն չունեն գնալ Լոնդոն, Բեռլին կամ Նյու Յորք՝ մեծ համերգներ լսելու, ուստի մենք աշխարհն ենք բերում Կապան: Այս տարի մեր աջակիցները բավականին շատ են, բացի հայկական կազմակերպություններից, մեզ օժանդակել են նաև օտարերկրյա հայտնի բրենդները, ինչը ևս մեկ անգամ ի ցույց է դնում կատարված աշխատանքի կարևորությունը: Բոլորիս երազանքն է փառատոնը դնել այնպիսի ուղու վրա, որ նույնիսկ այն տեղի ունենա առանց մեր մասնակցության, դառնա ավանդական: Մի բան հաստատ կարող եմ խոստանալ, որ հաջորդ տարվա փառատոնի օրերին կզարմանաք նույնքան, որքան այս ամռանը: Մեր բոլոր հյուրերն այնքան հուզված էին, որ չէին ցանկանում հեռանալ իրենց համար հարազատ դարձած Կապանից»,* – ասաց Սևակ Ավանեսյանը:

«Արմենպրես»-ը զրուցեց նաև փառատոնի մասնակից, լեգենդար ջութակահար Ռոբի Լակատոշի հետ: Երաժշտական քննադատների պնդմամբ՝ նա ոչ միայն վառ վիրտուոզ է, այլև՝ արտակարգ ոճական բազմազանությամբ երաժիշտ, եզակի վարպետ, ով սահմանափակումներից դուրս է: Դասական վիրտուոզ, ջազի իմպրովիզատոր, կոմպոզիտոր և գործիքավար Ռոբի Լակատոշը հանդես է եկել աշխարհի ամենահեղինակավոր բեմերում և խոշորագույն փառատոններում: Նվագել է ամենամեծ ջազ երաժիշտների հետ, ինչպիսիք են Հենրի Հենկոկը, Քուինսի Ջոնսը, Ստեֆան Գրապելին: Ունի բազմաթիվ ձայնագրություններ բրենդային համարվող թողարկողների հետ: 2004 թվականին Լակատոշը հասավ մեծ ճանաչման՝ Լոնդոնի սիմֆոնիկ նվագախմբի հետ հանդես գալով «Ջութակի հանճարը» փառատոնում:

*«Լակատոշը միախառնելով դասական երաժշտությունը հունգարական-գնչուական կենսախինդ մոգության հետ՝ ի ցույց է դնում հարազատ գնչու ժողովրդի մշակութային ժառանգության խոր արմատները և առաջարկում նոր ու թարմ բերկրանք ունկնդրին»* – ասում են երաժշտագետները:

Նա նույնպես տպավորված էր Հայաստան կատարած այցով և հիացած էր տեղի երաժիշտների կատարումներով:

*«Նախկինում մեկ անգամ այցելել եմ Հայաստան և հյուրընկալվել Երևանում, ընկերներիս մոտ, բայց Կապանում առաջին անգամ եմ և այստեղ մեր նվագախմբի հետ հանդես ենք գալու ծրագրված համերգով: Անչափ տպավորված եմ տեղի մադկանցով, ովքեր առատաձեռն են, հյուրընկալ և ունեն երաժշտական բարձր ճաշակ»,* – ասաց աշխարհահռչակ մաեստրոն:

Լակատոշը տեղեկացրեց, որ փառատոնի շրջանակում բոլոր համերգներն իսկապես անակնկալ էին: Երաժշտական ստեղծագործությունները բեմում ենթարկվում էին նոր իմպրովիզացիաների: Նրա համար մեծ պատիվ էր համագործակցել հայ երաժիշտների հետ:

«Հատկապես հայ պատանի երաժիշտներն ուղղակի հրաշք են՝ օժտված մեծ տաղանդով: Ամեն անգամ, երբ այցելում ենք որևէ երկիր, խնդրում են նվագել տեղի երաժիշտների հետ: Բայց նույնիսկ այդ պարագայում հայ պատանիներն ուղղակի ապշեցրին իրենց կատարումներով»,-իր հիացմունքը հայտնեց լեգենդար Ռոբի Լակատոշը:

**ARMENPRESS.AM, 19.07.2024**

# Ադրբեջանական որևէ հող չի գտնվում Հայաստանի հսկողության ներքո, որ Ադրբեջանն ուզենա հարձակվել. ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆ

«Ազատության»-ը տված բացառիկ հարցազրույցում ասաց Հայաստանում Իրանի դեսպան Մեհդի Սոբհանին:

**Խաղաղության պայմանագրի, նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարության, հաղորդակցության ուղիների բացման, Ղարաբաղի հայերի վերադարձի, Իրանի կարմիր գծերի և այլ թեմաների շուրջ դեսպանի հետ «Ազատության» հարցազրույցն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորև.**

**– Պարոն դեսպան, Իրանի նախագահական ընտրությունների օրը Դուք ասել էիք, թե անկախ այն հանգամանքից՝ ովքեր կլինեն իշխանության ղեկին Իրանում և Հայաստանում, Իրանի սկզբունքային քաղաքականությունը չի փոխվի. Թեհրանը հարգում է Հայաստանի տարածքային ամբողջականությունն ու դեմ է միջազգայնորեն ճանաչված սահմանների ցանկացած փոփոխության: Կխնդրեմ փակագծեր բացեք, ի՞նչ է սա նշանակում՝ կոնկրետ քայլերի տեսքով:**

– Սա փակագծեր չունի, և ամենի ինչ շատ հստակ է. մեր մեծարգո նախագահը, պարոն Փաշինյանի հետ հեռախոսազրույցում, շատ հստակ ասաց, որ հստակ դեմ ենք միջազգային սահմանների փոփոխությանը և հարգում ենք բոլոր երկրների տարածքային ամբողջականությունը: Մենք հստակ դեմ ենք աշխարհաքաղաքական փոփոխություններին: Բոլորը պետք է հարգեն միջազգային օրենքները: Առավել ի՞նչ փակագծեր բացեմ:

**– Առավել հստակեցնեմ, եթե Ադրբեջանը փորձի ռազմական ագրեսիա իրականացնել Հայաստանի դեմ, արդյոք Իրանը կմիջամտի՞, թե՞ ոչ:**

– Տեսեք, Դուք մի վարկած եք առաջ քաշում և դրա մասին հարց տալիս, նախկինում էլ մի քանի անգամ ինձ այդ հարցը տվել են, և ես ասել եմ, որ նման բան տեղի չի ունենա: Մենք առաջին հերթին ամեն ինչ կանենք, որ տարածաշրջանում պատերազմ չլինի: Մենք ուզում ենք, որ բոլորը հարգեն միմյանց տարածքային ամբողջականությունը: Եվ կանխարգելումը շատ ավելի լավ է, քան բուժումը: Մեր ամենամեծ ջանքն է, որ պատերազմ չլինի տարածաշրջանում: Միջազգային հանրությունն էլ է ուզում դա: Հայաստանի տարածքային ամբողջականությունը ճանաչվել է միջազգային հանրության կողմից և իր սահմանները հստակ են: Եվ պատերազմի նպատակ էլ չունի: Մենք տեսնում ենք, որ Հայաստանն ուզում է պահպանել խաղաղությունը և կայունությունը: Այդ ցանկությունը, խաղաղության և սահմանների հստակեցումը ցույց են տալիս, որ կողմերը չեն ուզում գնալ դեպի պատերազմ: Եվ, ի վերջո, որևէ արդարացում չկա պատերազմի համար: Որևէ հող Ադրբեջանից չի գտնվում Հայաստանի հսկողության ներքո, որ դրա համար ուզենան հարձակվել Հայաստանի վրա, ես կարծում եմ որ դա հաշվի կառնի նաև Ադրբեջանի կառավարությունը, որ պատերազմի համար չկա արդարացում: Այն վարկածը, որ Դուք ներկայացրեցիք, եթե դա տեղի ունենա, բնականաբար, միջազգային հանրությունը բացասական կվերաբերվի դրան:

**– Ճի՞շտ հասկացա, որ Դուք ասում եք, որ Ադրբեջանը ռազմական ագրեսիա չի իրականացնի: Այդ համոզունքը Ձեզ որտեղի՞ց: Դուք ասում եք, որ դա վարկած է, բայց Հայաստանի ԱԳՆ վերջերս չբացառեց, որ նոյեմբերին Բաքվում կայանալիք COP 29-ից հետո Բաքուն դիմի ռազմական ագրեսիայի: Եվ ուզում եմ նշել, որ հենց այս պահին էլ Ադրբեջանն օկուպացրել է Հայաստանից տարածքներ և՛ Սյունիքում, և՛ Սոթքում, և՛ Ջերմուկում:**

– Տեսե՛ք, այստեղ երկու հարց պետք է հաշվի առնել, այդ տեղային բախումները կամ հրադադարի խախտումները և մյուսը, ինչպես Դուք նշեցիք, պատերազմը, դրանք տարբերվում են իրարից: Այն, որ Հայաստանի տարածքների մի մասը գտնվում է Ադրբեջանի հսկողության տակ, բնականաբար, բանակցությունների և սահմանների հստակեցման շրջանակներում պետք է կարգավորվի: Երբ միջազգային սահմանների համաձայն պարզվեց, որ Ադրբեջանի տարածքների մի մասը գտնվում է Հայաստանի տարածքում, և այս հատվածը սահմանագծվեց, այդ տարածքները վերադարձվեցին:

**– Ի՞նչ նկատի ունեք, որ 4 գյուղերի տարածքները տրվեցի՞ն Ադրբեջանին:**

– Այո՛, և երբ այդ միջազգային գծերը հստակեցվեն, բնականաբար, պարզ կլինի, թե որ մասը որ երկրին է պատկանում: Մենք լավ հարաբերություններ ունենք և՛ Ադրբեջանի, և՛ Հայաստանի հետ, և օգտագործում ենք այդ լավ հարաբերությունները ու ջանք ենք գործադրում, որ, ինչպես Դուք ասացիք, նոր պատերազմ չլինի: Դիվանագիտությունը հարցերի լուծման ամենալավ տարբերակն է: Ինչո՞ւ սպասենք, որ պատերազմ տեղի ունենա, հետո դիվանագիտությունը գործի: Մենք պատրաստ ենք մեր ամբողջ պոտենցիալը օգտագործել, որ հարցերը լուծվեն խաղաղության միջոցով: Մենք դա ասում ենք որպես մի երկիրը, որը կարող է տուժել անկայունությունից և կարող է շահել կայունությունից:

**– Կարճ ճշտում, եթե Բաքվի կողմից տեսնենք ռազմական ագրեսիա, Իրանի կողմից կտեսնե՞նք քայլեր:**

– Սա Հայաստանն է, այն անկախ երկիր է, ունի ազգային ինքնիշխանություն, ունի տարածքային ամբողջականություն, և այս երկրում, ուրիշ երկրի ցանկացած գործողություն պետք է լինի տվյալ երկրի համաձայնությամբ: Այն, թե Իրանը Հայաստանի հետ համագործակցությունն ինչպես առաջ կտանի, կախված է երկու երկրների համագործակցությունից:

**– Հայաստանին ներկայացվող Բաքվի պահանջներից մեկն էլ այսպես կոչված «Զանգեզուրի միջանցքն է», Ալիևը պնդում է, որ Ադրբեջանը Նախիջևանի հետ պետք է կապ ունենա Սյունիքով, բայց առանց մաքսային ու սահմանային հսկողության: Ո՞րն է Իրանի դիրքորոշումն այս հարցում:**

– Ադրբեջանի նեկայացրած պահանջների շուրջ որոշում կայացնողը Հայաստանն է, բայց մեր դիրքորոշումն այդ հարցի վերաբերյալ հետևյալն է՝ մենք կողմնակից ենք, դեմ չենք սահմանային ապաշրջափակմանը: Դուք հարևան եք Ադրբեջանի և Թուրքիայի հետ, միշտ չեք կարող թշնամության մեջ լինել, և մի օր կլուծեք այդ հարցերը նրանց հետ: Եվ բնական է, որ երբ հարաբերությունները կարգավորվեն, սահմանները կբացվեն: Մենք կողմ ենք հաղորդակցային ուղիների բացմանը՝ Հայաստանի ինքնիշխանության ներքո: Եվ սա պետք է վերաբերի տարածաշրջանի բոլոր երկրներին: Մենք հիմա Նախիջևանի հետ սահման ունենք, և Ջուլֆայից կարող ենք և՛ երկաթգծով միանալ Երևանին, և՛ ճանապարհով Շատախտիից՝ Երասխին: Երթուղին շատ կկարճանա: Այսինքն՝ Մեղրիից Երևան մոտավորապես 6 ժամվա ճանապարհ է, իսկ Շատախտից մինչև Երասխ ու Երևան երևի մեկ ժամից էլ քիչ կլինի: Այսինքն՝ եթե բացվի ճանապարհը, բոլորը կօգտվեն: Սա ոչ միայն արևելք-արևմուտք, այլև հյուսիս-հարավին է վերաբերում: Բայց ապաշրջափակումն այդ բոլորը պետք է ներառի իր մեջ՝ երկրների ազգային ինքնիշխանության շրջանակներում: Ոչ ոք թույլ չի տալիս, որ իր տարածքում իր օրենքները չպահպանվեն, դա միջազգային իրավունքի դեմ է և չպետք է այստեղ որևէ դիվիդենտ ստեղծվի: Եվ օգուտն էլ պետք է վերաբերի բոլորին:

**– Այն, որ Դուք նշում եք, որ պետք է հարգվի ինքնիշխանությունը, այդ մասին նաև Հայաստանն է խոսում, առաջարկելով «Խաղաղության խաչմերուկը»: Բայց Ռուսաստանը պնդում է, թե նոյեմբերի 9-ի հայտարարությամբ Նախիջևան-Սյունիք այդ հատվածը պետք է վերահսկեն ռուս սահմանապահները: Եվ այժմ արդեն կան տեղեկություններ, որ այդ գործառույթը կարող է վստահվել որևէ եվրոպական կամ միջազգային կազմակերպության: Իրանի համար այս տարբերակներից ո՞րն է առավել ընդունելի:**

– Ես արդեն ասացի մեր դիրքորոշումը՝ մենակ կողմ ենք, որ լինի Հայաստանի տարածքային ինքնիշխանության ներքո: Այն համաձայնագիրը, ինչի մասին Դուք նշեցիք, դրանում առկա պայմանավորվածությունների մի մասն այլևս գոյություն չունի: Դուք միայն այդ պայմանավորվածությունների մի մասն եք ասում: Սա մի համաձայնագիր է, որը նաև ուրիշ հարցեր է ընդգրկել: Այդ հարցերի մեջ եղել են Ղարաբաղը, Ղարաբաղի և Հայաստանի կապը, Լաչին-Շուշի կապը: Դրանք հիմա չկան, որ ուզենանք դրանց հղում անել: Հիմա իրականում չկա գործնական առումով գոյություն ունեցող փաստաթուղթ:

**– Այսինքն՝ կարո՞ղ ենք ասել, որ չի գործում այդ փաստաթուղթը:**

– Այո՛, դա չի գործում: Եվ այդ պայմանավորվածությունների մի մասն արդեն գոյություն չունի: Եվ մնացածն էլ, բնականաբար, գոյություն չունեն:

**– Պարոն դեսպան, նշեցիք, որ կողմ եք, որ այդ ճանապարհները ապաշրջափակվեն, կարո՞ղ ենք ասել, որ Իրանը կողմ է, որ ապագայում, Բաքուն Սյունիքով դուրս գա Նախիջևան: Մենք գիտենք, որ Բաքուն այդ կապը հիմա ապահովում է Իրանի միջոցով: Դուք, այսինքն, որևէ խնդիր ձեր շահերի հետ կապված չեք տեսնո՞ւմ այս հարցում: Հայաստանյան որոշ քաղաքական գործիչներ պնդում են, որ սա Իրանի համար կարմիր գիծ է:**

– Մեր կարմիր գիծն այն ժամանակ է լիելու, երբ Հայաստանի հետ մեր սահմանը խզվի: Այսինքն՝ այնպես ստացվի, որ մենք չկարողանանք Հայաստանի հետ կապ ունենալ: Սա է մեր կարմիր գիծը: Մնացած ապաշրջափումն էլ լինի Հայաստանի ինքնիշխանության ներքո, տարածքային ամբողջականության շրջանակներում, հարգեն Հայաստանի օրենքները: Դուք շատ եք անդրադառնում այդ հարցին, նրանք մի բան ասում են, դուք այնքան եք անդրադառնում այդ հարցին, որ ուռճացնում եք: Նրանք զբաղեցրել են ձեզ մի նախադասությամբ: Նայեք, եթե մի երկիր ուրիշ երկրից դիվիդենտ է ուզում, արդյո՞ք պատրաստ է ինքն էլ դիվիդենտ տալ այդ երկրին: Երկրները միմյանց հետ խոսում են, որ դյուրացնեն իրենց հարաբերությունները, բայց չեն թողնի, որ իրենց ազգային ինքիշխանությունը խախտվի, ուրիշները մտնեն իրենց տարածքի մեջ, և դա լինի իրենցը: Եթե Հայաստանն ուզենար, որ նման բան պատահեր, նման գին չէր վճարի:

**– Պարոն դեսպան, ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի և Ադրբեջանի միջև շուրջ երկու տարի ընթացող խաղաղության գործընթացը: Դուք հնարավոր համարո՞ւմ եք, որ առաջիկայում փաստաթուղթ ստորագրվի: Ինչպես գիտեք, Բաքուն հերթական պահանջն է առաջ քաշել և պնդում է, որ պայմանագիրը չի ստորագրվի, քանի դեռ Հայաստանը չի փոխել իր Սահմանադրությունը:**

– Մենք լավատես ենք այդ հարցի շուրջ, տեսեք դուք, երբ երկխոսում եք, դուք կրակելու ժամանակ չունեք: Սա պետք է շարունակվի: Ամեն դեպքում ամեն կողմ իր սակարկությունը բանակցություններում ուժեղացնելու համար հնարավոր է ինչ-որ հարցեր առաջ քաշի:

**– Մենք երկար խոսեցինք ինքնիշխանության կարևորության մասին, բայց արդյո՞ք երբ Ադրբեջանը Հայաստանից պահանջում է փոխել իր Սահմանադրությունը, սա հենց ինքնիշխանության դեմ ուղղված քայլ չէ:**

– Սա արդեն Հայաստանի կառավարությունը պետք է որոշի, դա դե՞մ է իր ինքնիշխանությանը, թե ոչ:

**– Մենք ասում ենք, որ դա մեր ներքին գործն է:**

– Բնականաբար, եթե ասում եք՝ դա ձեր ներքին գործն է, ձեր կառավարությունն էլ համապատասխան դիրքորոշում կկայացնի:

**– Պարոն Սոբհանի, ինչպես գիտեք անցած տարի Ադրբեջանը բլոկադայից հետո ռազմական ագրեսիա իրականացրեց Արցախի նկատմամբ, արցախցիները բռնի տեղահանվեցին: Այժմ Լեռնային Ղարաբաղը, որտեղ հազարամյակներով հայեր են ապրել, հայաթափված է: Իրանը, իբրև մեր տարածաշրջանի գլխավոր դերակատարներից մեկը, այս հարցի լուծումը ինչպե՞ս է տեսնում: Պե՞տք է Ադրբեջանը հարգի արցախահայերի հավաքական վերադարձի իրավունքը: Ի վերջո, մարդիկ թողել են իրենց հայրենիքը, տունը, կարողությունները, պատմությունն ու մշակույթը:**

– Մեր դիրքորոշումը Ղարաբաղի բնակիչների իրավունքների վերաբերյալ հստակ է: Մենք, ճանաչել ենք Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը, ընդգծում ենք դա, բայց միևնույն ժամանակ գտնում ենք, որ Ղարաբաղի հայ բնակիչների իրավունքները պետք է հարգվեն: Այդ հարցը վերքի է նման, և այդ վերքը պետք է բուժվի: Եվ եթե չբուժվի, նորից հնարավոր է, որ այդ վերքը բացվի: Երբ խոսվում է կայուն խաղաղության մասին, այդ վերքն էլ

# Բաքվում պահվող հայ բանտարկյալների վերադարձն ազգային արժանապատվության հարց է. ՖԻԼԻՊ-ՐԱՖՖԻ ՔԱԼՖԱՅԱՆԻ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

**NEWS.am-ը շարունակում է հարցազրույցների շարքը՝ իրավական հարցերով միջազգային մասնագետների, իրավապաշտպանների և ոլորտի փորձագետների հետ՝ հասկանալու, թե ինչ է պետք անել և ինչ մեխանիզմներ կան Բաքվում ապօրինաբար պահվող 23 հայ բանտարկյալներին ազատ արձակելու, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարության իրավունքները պաշտպանելու, նրանց նկատմամբ խոշտանգումները կանխելու և նրանց վերադարձն ապահովելու համար:**

**Այս անգամ մենք զրուցել ենք միջազգային իրավունքի փորձագետ, Փարիզի Պանթեոն-Ասսաս համալսարանի դոցենտ, կառավարությունների իրավական խորհրդատու Ֆիլիպ-Ռաֆֆի Քալֆայանի հետ:**

**– Ադրբեջանը շարունակում է 23 հայերի ապօրինի պահել Բաքվի բանտերում: Ռուբեն Վարդանյանի իրավաբանական թիմի կողմից Խոշտանգումների հարցով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողին ողղված դիմումից տեղեկացանք, որ նրա նկատմամբ խոշտանգումներ են եղել: Վստահաբար, խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի են ենթարկվում մյուս հայ բանտարկյալները: Ըստ Ձեզ՝ այս պարագայում ի՞նչ պետք է անի պետությունը իր քաղաքացիներին պաշտպանելու համար, ի՞նչ անելիք ունեն իրավապաշտպան կազմակերպություններն ու ՀԿ-ները, և ի՞նչ պետք է անի Սփյուռքը:**

– Ես երեք նկատառում ունեմ Ձեր հարցերի առնչությամբ: Նախ, կասկած չկա, որ ազգությամբ հայ գերիները նախկինում ենթարկվել են խոշտանգումների և դաժան վերաբերմունքի, այդ թվում՝ ռազմագերիները: Այդ դեպքերից մի քանիսը փաստաթղթավորված են և զեկուցվել են ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեին՝ 2024 թվականի ապրիլի վերջին նստաշրջանի ժամանակ: Կոմիտեն, պարբերական դիտարկումների շրջանակում, դիտարկում էր իրավիճակն Ադրբեջանում:

**– Այն եզրահանգել էր հետևյալը. «Հանձնաժողովն անհանգստացած էր զինված հակամարտությունների և հակահաբեկչական գործողությունների ընթացքում էթնիկ և ազգային պատկանելությամբ հայերի նկատմամբ ենթադրյալ արտադատական սպանությունների, խոշտանգումների և դաժան վերաբերմունքի, ինչպես նաև այդ մեղադրանքների հետաքննության և դատական հետապնդման բացակայության պատճառով»: Այն նաև մտահոգություն էր հայտնել ահաբեկչության և հարակից հանցագործությունների համար 23 հայերի շարունակական կալանքի կապակցությամբ:**

– Կոմիտեն Ադրբեջանին կոչ էր արել ամենաբարձր մակարդակով հայտարարել, որ միջազգային մարդասիրական իրավունքի և մարդու իրավունքների վերաբերյալ օրենսդրության ցանկացած խախտում անընդունելի է, ինչպես նաև կոչ էր արել անկախ, անաչառ, թափանցիկ ու արդյունավետ հետաքննություն անցկացնել՝ լրջագույն խախտումների կասկածանքների վերաբերյալ, և հորդորել էր մասնակից պետությանը պատասխանատվության ենթարկել մեղավորներին»:

ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեի եզրակացություններն ավելի ուժեղ իրավական ուժ ունեն, քան ՄԱԿ-ի հատուկ ընթացակարգերով կիրառվող ցանկացած ընթացակարգ (Խոշտանգումների հարցերով հատուկ զեկուցողը դրանցից մեկն է): Ադրբեջանը պարտավոր է պատասխանել ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ կոմիտեին, քանի որ հանդիսանում է «Խոշտանգումները և դաժան վերաբերմունքն արգելող» կոնվենցիայի կողմ:

Այդուհանդերձ բոլոր խողովակները՝ լինեն դրանք պայմանագրով նախատեսված մարմիններ, թե հատուկ ընթացակարգեր, ՀԿ-ները պետք է օգտագործեն տարածաշրջանային (եվրոպական) և միջազգային ֆորումներում: Միջազգային իրավունքի խախտման յուրաքանչյուր արձանագրություն շատ կարևոր տարր է Ադրբեջանի դեմ ընթացիկ և ապագա դատական գործընթացների, ինչպես նաև ամբողջ աշխարհում կառավարությունների, օրենսդիր մարմինների և միջկառավարական հաստատությունների իրազեկման համար: Այստեղ է, որ Սփյուռքը և Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ապարատը պետք է գործեն համատեղ ու համաձայնեցված կերպով:

Երկրորդ, ինչ վերաբերում է ձերբակալված և բանտարկված ութ նախկին պաշտոնյաներին, շատ մանրամասներ հայտնի չեն: Ռուբեն Վարդանյանի փաստաբանների դիմումի մեջ, որն ուղղված էր ՄԱԿ-ի Խոշտանգումների դեմ հարցերով հատուկ զեկուցողին, նշվում էր Վարդանյանի նկատմամբ դաժան վերաբերմունքի՝ կապված կալանքի պայմանների հետ, և պատժիչ միջոցների մասին, որոնք կիրառվել են՝ ի պատասխան Վարդանյանի հացադուլ հայտարարելուն:

Դաժան վերաբերմունքը բավականին տարածված պրակտիկա է ավտորիտար երկրներում: Սակայն, այստեղ հատկապես տագնապալին այն է, որ Ադրբեջանը վարում է հայատյացության պաշտոնական քաղաքականություն, որն առավելապես ցցուն է արցախահայերի նկատմամբ, որոնք ներկայացվում են որպես վատագույն չարիքներ:

Դաժան վերաբերմունքի այդ բոլոր ձևերը, ըստ Կոնվենցիայի, հավասարեցված են խոշտանգումների հետ: Ըստ էության, այդ անձանց կամայական ձերբակալությունն ու կալանավորումը և նրանց դեմ ներկայացված՝ ահաբեկչության հետ կապված շինծու մեղադրանքները, հայերի նկատմամբ ատելությունն արդեն իսկ դաժան վերաբերմունքի միջավայր են ստեղծում: Իմանալով, որ այդ մեղադրանքներն Ադրբեջանում շատ խստորեն պատժվում են և հաշվի առնելով այդ երկրում արդար դատավարության կառուցվածքային բացակայությունը, կարող ենք ասել, որ բանտարկյալներն իսկապես ենթարկվում են հոգեկան դաժան վերաբերմունքի, քանի որ նրանք չեն կարող արդարադատության հետ հույսեր կապել. նրանց մնում է պարզապես հույսը դնել միջազգային հանրության կողմից քաղաքական ճնշումների վրա: Ես վստահ չեմ, որ «միջազգային հանրություն» կոչվածն այս պահին գոյություն ունի, հատկապես երբ դա վերաբերում է միջազգային իրավունքի խախտումներին:

Հայաստանի Հանրապետությունը շատ տեղեկություններ չի հաղորդում բանտարկյալների մասին: Փոխարենը գործող իշխանություններն անգամ ոչ պատշաճ ու անընդունելի խոսքեր են ասում արցախցիների ու նրանց ղեկավարների հասցեին: Մնում է միայն հուսալ, որ 23 հայտնի բանտարկյալների ճակատագիրը Հայաստանի և Ադրբեջանի միջև ընթացող բանակցությունների մաս է կազմում: Եթե այդպես չէ, ուրեմն դա հանցագործություն կլինի:

Երրորդ, Ձեր հարցադրման մեջ ասվում է, որ բանտարկյալներն ունեն ՀՀ քաղաքացու կարգավիճակ, բայց հաշվի առնելով այդ հարցի շուրջ հանրային քննարկումները, որոնք բացահայտեցին քաղաքացիության և անձնագրի միջև առկա նրբությունները, ինչպես նաև ներկայիս կառավարության քաղաքականությունը, որը փորձում է կառուցել մի պետություն, որտեղ ազգություն չկա, հարց է առաջանում՝ արդյո՞ք Հայաստանի կառավարությունն այդ բանտարկյալներին համարում է ՀՀ քաղաքացիներ, որոնց պարտավոր է պաշտպանելու:

Ես ի սկզբանե հրապարակայնորեն հայտարարել եմ, որ ոչ մի խաղաղ պայմանագիր կամ համաձայնագիր չպետք է երբեէ կնքվի՝ մինչև մեր բանտարկյալները չվերադառնան: Սա ազգային արժանապատվության հարց է և վստահության ամրապնդում՝ քաղաքացիների և կառավարության միջև: Սա նաև ընդունված պրակտիկա է պետությունների մեծ մասում: Դուք երբեք չեք տեսնի, որ ԱՄՆ-ը, Ֆրանսիան, Ռուսաստանը, Իսրայելը և մյուս երկրները խաղաղության համաձայնագիր կնքեն թշնամական կողմի հետ այն պարագայում, երբ իրենց քաղաքացիները պատանդառված են:

Հետևաբար, Ձեր հարցին իմ պատասխանը զուտ քաղաքական է. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես պետություն, չպետք է երբևէ թույլ տար, որ այս իրավիճակը տեղի ունենար՝ ընդհուպ մինչև 2023 թվականի սեպտեմբերի վերջերին տեղի ունեցած նախկին պաշտոնյաների ձերբակալությունը: Դեռևս հանելուկ է մնում, թե ինչպես պատահեց, որ Արցախի նախկին շատ պաշտոնյաներ կարողացան հատել սահմանը, մինչդեռ որոշները՝ ձերբակալվեցին:

Սրանից կարելի է հետևություն անել է, որ պատշաճ կերպով չեն բանակցվել կապիտուլյացիայի պայմանները: Հայաստանը համաձայնել է Արցախը հանձնել Ադրբեջանին՝ առանց ԲՈԼՈՐ արցախցիների ազատ տեղափոխությունն ապահովելու: Ցանկացած պետություն, որը կարևորում է ազգային արժանապատվությունը, պետք է պաշտպանի

*Շարունակությունը՝ էջ 8*

պետք է հաշվի առնել: Մենք հուսով ենք, որ այնպես, ինչպես Ղարաբաղի բնակիչները ոչ կամավոր լքել են իրենց տները, այնպիսի պայմաններ ստեղծվեն, որ նրանք կարողանան կամավոր վերադառնալ իրենց տները:

**– Այսինքն՝ ապահովվի նրանց անվտանգությո՞ւնը:**

– Բնական է, այն հիմնական պատճառը, որ նրանք լքեցին այդ տարածքը, հենց այդ պատճառով էր, որովհետև չէին զգում այդ անվտանգությունը: Ես ինքս խոսել եմ ղարաբաղցիների հետ: Փախստականները երբ եկել էին, ես ինքս գնացի Կապան, խոսեցի նրանց հետ: Նրանք ասացին, որ մենք կամավոր չենք լքել մեր տները: Ոչ ոք կամավոր չի լքում իր տունը: Նրանք ասացին, որ անվտանգություն չեն զգացել: Եվ հենց այդ պատճառով էլ լքել են իրենց տները: Նրանք կամավոր չեն եկել, բայց հույս ունենք, որ այնպիսի պայմաններ կստեղծվեն, որ նրանք կամավոր վերադառնան իրենց տներ:

**– Քանի որ այդ անվտանգությունը, շատ կարևոր գործոն է, որպեսզի արցախահայերը վերադառնան՝ հաշվի առնելով, թե ինչի միջոցով են անցել՝ և՛ բլոկադա, և՛ ռազմական ագրեսիա: Ի՞նչ եք կարծում, արդյոք արցախահայերը պետք է ինքնավարության որոշակի աստիճան ունենան, որպեսզի ապահովվի այդ անվատգությունը:**

– Պետք է երկխոսություն և բանակցություն լինի այն հարցի շուրջ, թե ինչպիսի պայմաններ պետք է լինեն այնտեղ: Եկեք մենք և դուք չորոշենք նրանց համար:

**– Ո՞վ պետք է որոշի նրանց համար:**

– Ես կարծում են՝ իրենք պետք է բանակցեն:

**– Արցախի ներկայացուցիչների և Ադրբեջանի ներկայացուցիչների մի՞ջև:**

– Թե դա ինչպես պետք է սկսկվի՝ երկու կողմերի համաձայնության հարց է: Նպատակը պետք է լինի Ձեր ասած անվտանգությունը և նրանց իրավունքներին հասնելը:

**– Երևանում արտախորհրդարանական մի շարք ուժեր նաև հորդորում են իշխանությանն արդեն այս աշնանը ԵՄ անդամակցության հարցով հանրաքվե անցկակցնել: Ինչպես գիտեք, Հայաստանում են ԵՄ դիտորդները, ովքեր մոնիտորինգ են իրականացնում հայ-ադրբեջանական սահմանին: Վարչապետ Փաշինյանը հայտարարել է, որ պատրաստ է լինել մոտ ԵՄ-ին այնքան, որքան ԵՄ թույլ կտա: Հայաստանի խորհրդարանի ղեկավարը չի բացառել, որ մոտ ապագայում Հայաստանում կլինի ԵՄ անդամակցության հանրաքվեն և հայ ժողովուրդը կասի՝ այո: Հայաստանի ԵՄ անդամակցությանը, Հայաստանի այս ձգտումներին Իրանն ինչպե՞ս է արձագանքում, Իրանը դե՞մ է:**

– Հայաստանը անկախ երկիր է, և մենք հարգում ենք Հայաստանի որոշումները: Հայաստանի ժողովուրդն իրավունքը ունի որոշել իր ճակատագիրը: Եվ այն, որ Հայաստանը որոշել է իր քաղաքականության մեջ բազմազան ուղղություններով առաջ գնալ, դա էլ ենք հարգում: Բայց մեզ համար կարևորն այն է, որ այդ բազմազանությունը արտաքին քաղաքականության մեջ Իրան-Հայաստան հարաբերություններին չվնասի: Հիմնական հարցը մեզ համար դա է: Մենք ուզում ենք, որ Հայաստանը զարգանա, Հայաստանի ենթակառուցվածքները զարգանան, նաև պատրաստ ենք, որ երբ Եվրոպայից ներդրումները գան այստեղ, ծրագրեր, նաև մենք կարողանանք իրականացնել՝ ճանապարհներ, ջրամբարներ, էներգետիկ ոլորտում, որը կնպաստի Հայաստանի բարգավաճմանը: Ենթադրենք ԵՄ-ն գա և Քաջարանից մինչև Սիսիան ճանապարհի կառուցումը ֆինասնավորի: Բնականաբար, իրանական ընկերությունները կներգրավվեն: Ներկա պահին Մեղրիում սահմանային մաքսակետն իրանական ընկերությունն է վերանորոգում, և դա ֆինանսավորել է Եվրոպական բանկը: Մենք պետք է նայենք ապագային: Հայաստանի կառավարությունը մեզ ասել է, որ այլ երկրների հետ փոխահարբերությունները բացասական ազդեցություն չեն թողնի Իրանի հետ հարաբերությունների վրա: Եվ մենք հավատում ենք նրան, ինչ մեզ ասում են:

**ՀՈՒԼԻՍ 13, 2024**

# Բաքվում պահվող հայ բանտարկյալների վերադարձն ազգային արժանապատվության հարց է. Ֆիլիպ-Ռաֆֆի Քալֆայանի հարցազրույցը

*Սկիզբը՝ էջ 7*

իր քաղաքացիներին, և գերիների ու պատանդների վերադարձը սահմանի որպես դիվանագիտական առաջնահերթություն:

**– Ադրբեջանի նախագահի օգնական Հիքմեթ Հաջիևը վերջերս հայտարարեց, որ Հայաստանին հրավեր է ուղարկվել՝ մասնակցելու Բաքվում նոյեմբերին կայանալիք COP29-ին: Նրանք նաև ամենուր հայտարարում են, թե իբր COP29-ը պետք է դառնա «Խաղաղության COP», բայց շարունակում են ոտնահարել մարդու իրավունքները ու ապօրինի կերպով պահել հայերին: Արդյոք սա լավ առիթ չէ՞, որպեսզի Հայաստանը, որպես Ադրբեջանի իրական խաղաղ մտադրության երաշխիք, պահանջի հետ վերադարձնել հայ պատանդներին ու գերիներին:**

– Ձեր հարցի մեջ չի նշվում այն փաստը, որ Հայաստանն արդեն ստացել է փոխհատուցում՝ ՄԱԿ-ի Կլիմայի փոփոխության մասին շրջանակային կոնվենցիայի Կողմերի համաժողովի 29-րդ նստաշրջանը (COP29) հյուրընկալելու Ադրբեջանի հայտին աջակցելու համար: Այս աջակցության շնորհիվ ազատ են արձակվել 32 հայ զինծառայողներ: Ադրբեջանը համատեղ հայտարարության մեջ պնդում է, որ սա ժեստ է, որն «առաջնորդվել է մարդասիրական արժեքներով և բարի կամքի դրսևորմամբ»: Հետեւաբար, Հայաստանն այլեւս չի կարող այդ խաղաքարտն օգտագործել: Սա արդեն այլ պետությունների անելիքն է՝ բոյկոտելու COP29-ը Ադրբեջանում, եթե բանտարկյալներն ու պատանդները մինչև համաժողովի բացումն ազատ չարձակվեն: Այդ բանտարկյալների կամայական ձերբակալությունների ու կալանավորման, Ադրբեջանի կողմից նրանց խոշտանգումների ու դաժան վերաբերմունքի մասին արդեն իսկ կան բավարար փաստական և իրավական արձանագրություններ, որպեսզի արդարացվի այդ դիրքորոշումը: Բացի այդ, համընդհանուր հայտնի իրողություն է, որ Ադրբեջանում չկա օրենքի գերակայություն, չկա անկախ դատական համակարգ և չկան անկախ իրավաբաններ:

**– Վերջերս Միջազգային քրեական դատարանի առաջին դատախազ Լուիս Մորենո Օկամպոն կոչ արեց միանալ արշավին, որն ուղղված է նրան, որ COP-29-ում դիտարկվեն ոչ միայն կլիմայի փոփոխության, այլև մարդու իրավունքների պաշտպանության և գերիների ազատ արձակման հարցերը: Ինչպե՞ս եք գնահատում նման նախաձեռնությունը:**

– Օկամպոյի հայտարարությունը համապատասխանում է իմ վերոնշյալ պատասխանին: Ես ողջունում եմ այդ կոչը, բայց ամոթալի եմ համարում այն, որ պարոն Օկամպոն պետք է հրապարակեր այդ բաց նամակը, որ ստիպեր հայերին թե Հայաստանում, թե սփյուռքում տեղից շարժվել:

Նրա կոչը նշանակում է. «Հայեր, եթե դուք քայլեր չեք ձեռնարկում Բաքվի բանտերից հայ պատանդների և քաղբանտարկյալների անհապաղ ազատ արձակման ուղղությամբ՝ COP29-ի գագաթնաժողովին ընդառաջ, ապա մյուսները չեն կարող օգնել»: (Այս հայտարարությունը միանգամայն ճիշտ է բանտարկյալների հարցի, ինչպես նաև Հայաստանի պետական այլ գործերի վարման տեսանկյունից):

Ինչպես նշվեց վերևում, Հայաստանի Հանրապետությունը, ցավոք, այլևս չի կարող այդ խաղաքարտը խաղարկել, քանի որ համատեղ հայտարարությամբ աջակցել է Ադրբեջանի հայտին՝ առանց նախապայմանների: Մնացած հայ ռազմագերիների կամ քաղբանտարկյալների ազատ արձակման մասին ոչինչ չի նշվում:

Իմ կարծիքն այն է, որ մնացած բանտարկյալները, հատկապես Արցախի նախկին ղեկավարները, պատանդ են մնալու Ադրբեջանում այնքան ժամանակ, քանի դեռ Հայաստանն իր Սահմանադրությունից չի հանել Արցախի գոյությունը: Պատանդ վերցնելն անարդար է միջազգային իրավունքի տեսանկյունից, բայց սա հաղթող կողմից պարտադրվում է պարտված կողմին, որն անձնավորված է Հայաստանի վարչապետի կերպարով: Ադրբեջանի նպատակն է վերջնականապես նվաստացնել հայերին և չեղարկել անկախ Արցախի մասին բոլոր երազանքները. Արցախի նախկին ղեկավարներին ադրբեջանական բանտերում պատանդ պահելն ու դատապարտելը նպատակ ունի ոչնչացնելու դիմադրության ցանկացած գաղափար:

**– Ադրբեջանի պահանջներից մեկն էլ նաև այն է, որ Հայաստանը հետ կանչի միջազգային դատական ատյաններում ընդդեմ Ադրբեջանի ներկայացված հայցերը: Ի՞նչ հետևանքներ սա կարող է ունենալ Հայաստանի համար:**

– Նախևառաջ, կցանկանայի նշել, որ եթե այս պահանջը կատարվեր, ապա անակնկալ չէր լինի: Դա նորմալ քայլ կլիներ, եթե Ադրբեջանն անկեղծ գործընկեր լիներ՝ խաղաղության արդար պայմանագիր կնքելու ջանքերում: Բայց ակնհայտ է, որ դա այդպես չէ, քանի որ Ադրբեջանը մեկը մյուսի հետևից նոր պայմաններ է առաջ քաշում: Առավել զարմանալին այն է, որ միջպետական վարույթից հրաժարվելու գաղափարն առաջինը ներպետական հանրային քննարկման է դրել ՀՀ վարչապետը:

Իրավապաշտպան համայնքը սրան օպերատիվ կերպով է արձագանքել, նաև իմ գործընկերները՝ Հայաստանի և Արցախի նախկին Մարդու իրավունքների պաշտպաններ Արման Թաթոյանը, Արտակ Բեգլարյանը և Գեղամ Ստեփանյանը, ինչպես նաեւ միջազգային ատյաններում Հայաստանի քաղաքացիների շահերը ներկայացնող փաստաբաններ Արա Ղազարյանն ու Սիրանուշ Սահակյանը: Նրանք բոլորը հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ նախազգուշացնելով, թե ինչ հետևանքներ է լինելու Հայաստանի համար՝ միջազգային դատարաններում Ադրբեջանի դեմ հայցերից հրաժարվելու դեպքում: Ես լիովին համաձայն եմ այս հայտարարության մեջ նշված հիմնական կետերին:

Այս հնարավոր քայլի մասին թե ակնարկելը, թե քննարկումներ անելն աղետ են արդարադատության, միջազգային հանցագործությունների անպատժելիության դեմ պայքարի, Հայաստանի՝ որպես իրավունքի միջազգային սուբյեկտի վստահելիության և, ի վերջո, Հայաստանի դիվանագիտական ջանքերի համար:

Միջազգային իրավունքը և դիվանագիտությունը սերտորեն փոխկապակցված են: Վարչապետի հայտարարությունը վիժեցնում է արտգործնախարարության և միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի ջանքերը: Այն վտանգում է Արդարադատության միջազգային դատարանում (ICJ) ձեռք բերված իրավական հաղթանակը՝ այս կառավարության շատ հազվադեպ լավ նախաձեռնություններից մեկը: Իրոք, նախկին կառավարություններից և ոչ մեկը երբևէ ներգրավված չի եղել միջպետական դատավարություններին:

Արդարադատության միջազգային դատարանում միջպետական դատավարությունից հրաժարվելը կլինի Արցախի հարցի վերջնական թաղումը և սխալ ազդանշան կհղի մարդկությանը, քանի որ անպատժելիությունը կամրապնդվի: Նման քայլը կվնասի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանում կամ Միջազգային քրեական դատարանում ընթացող մյուս բոլոր դատավարություններին:

Արդարադատության միջազգային դատարանի որոշմամբ՝ ներկայիս ժամանակավոր միջոցներն արդեն իսկ պաշտպանում են արցախցիների՝ իրենց հող վերադառնալու իրավունքը:

Հարկ է հիշեցնել, որ Արդարադատության միջազգային դատարանի 2021 թ. դեկտեմբերի 7-ի որոշման համաձայն՝ Ադրբեջանը պետք է «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների համաձայն՝ ա) պաշտպանի բռնությունից և մարմնական վնասվածքներից բոլոր այն անձանց, որոնք 2020 թվականի հակամարտությամբ պայմանավորված գերեվարվել են ու մնում են կալանքի տակ և ապահովի նրանց անվտանգությունն ու հավասարությունը օրենքի առջև, բ) ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու ռասայական ատելության և խտրականության հրահրումը և խթանումը, այդ թվում՝ իր պաշտոնյաների և հասարակական կառույցների կողմից, որոնք ուղղված են հայերի էթնիկ կամ ազգային պատկանելության դեմ, գ) ձեռնարկի բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու վանդալիզմի և պղծման գործողությունները՝ հայկական մշակութային ժառանգության, ներառյալ, բայց չսահմանափակվելով եկեղեցիների և այլ պաշտամունքային վայրերի, հուշարձանների, տեսարժան վայրերի, գերեզմանատների ու արտեֆակտների նկատմամբ:

2023 թվականի սեպտեմբերի 19-ին Լեռնային Ղարաբաղի 120 հազար հայերի դեմ Ադրբեջանի իրականացրած լայնամասշտաբ ռազմական հարձակումից և բնակչության բռնի տեղահանումից հետո Արդարադատության միջազգային դատարան ներկայացրած Հայաստանի վերջին միջնորդության մեջ՝ միջանկյալ միջոցներ կիրառելու վերաբերյալ, Հայաստանը նշել էր, որ «Ադրբեջանը պետք է ձեռնպահ մնա Լեռնային Ղարաբաղի ներկա կամ նախկին քաղաքական գործիչների կամ զինվորականների դեմ պատժիչ գործողություններ ձեռնարկելուց»:

2023 թվականի նոյեմբերի 17-ին Դատարանը որոշում է, որ «Ադրբեջանը պետք է ապահովի, որ այն անձինք, որոնք լքել են Լեռնային Ղարաբաղը 2023 թվականի սեպտեմբերի 19-ից հետո և որոնք ցանկանում են վերադառնալ Լեռնային Ղարաբաղ, կարողանան դա անել անվտանգ, անարգել և արագ կերպով»: Այն նաև հիշեցնում է Ադրբեջանի պարտավորությունը, այն է՝ «պաշտպանելու և չոչնչացնելու Ղարաբաղում հայտնաբերված գրանցման, ինքնության և/կամ մասնավոր սեփականության փաստաթղթերն ու ապացույցները»:

Թեև Դատարանի այս վերջին որոշման մեջ պատերազմի և քաղբանտարկյալների հետ կապված որևէ միջոցի կիրառում չի հիշատակվել, ես համարում եմ, որ Արդարադատության միջազգային դատարանը ճիշտ հարթակ է, որտեղ կարող են ներկայացվել ու պաշտպանվել նրանց գործերը: Եթե հետագայում Դատարանի կողմից Արցախից բռնի տեղահանումը ճանաչվի որպես միջազգային իրավունքի խախտում, ապա արցախցիների ազատ արձակումը կդառնա Ադրբեջանի պարտավորությունը՝ այդ իրավունքի խախտումը դադարեցնելու պարտավորության լույսի ներքո: Մարդկանց ապօրինաբար բերման ենթարկելու, կալանավորելու կամ բանտարկելու դեպքում խախտումները դադարեցնելու գերակա անհրաժեշտությունը ծագել է Արդարադատության միջազգային դատարանի՝ «Թեհրանում ԱՄՆ Դիվանագիտական և հյուպատոսական անձնակազմի» գործով, որը հակադրվում էր «Միացյալ Նահանգներն ընդդեմ Իրանի» գործին: Այն փաստը, որ կալանավորված անձինք մարդկային էակներ են, որոնց նկատմամբ դաժան վերաբերմունքը հանգեցրել է ֆիզիկական և հոգեկան ամբողջականության խաթարման, անձնական ազատության և արժանապատվության ոտնահարման, նրանց ազատ արձակումը բարոյական և իրավական առումներով առավել ակնհայտ է դարձնում նրանց նկատմամբ խախտումները հրատապ կերպով դադարեցնելու պահանջը:

Սրանից և ոչ մեկը չի կարող տեղի ունենալ, եթե Հայաստանը հրաժարվի միջպետական գործընթացներից: Հրաժարվելու այս սցենարն ամենևին էլ երևակայական չէ, եթե հիմնվենք ներկայիս կառավարության հրապարակային ելույթների վրա: Հայերը պետք է կանխատեսեն այս հեռանկարը: Թեպետ Արդարադատության միջազգային դատարանի դատավարությունից Հայաստանի դուրս գալը դիվանագիտական լուրջ խոչընդոտներ կստեղծի, սակայն կան այլընտրանքային լուծումներ՝ շարունակելու Արցախի ժողովրդի իրավունքների պաշտպանությունը և պատանդների ազատ արձակումը՝ առանց ՀՀ կառավարության մասնակցության: Այդ տարբերակները հրապարակայնորեն մանրամասնելը տեղին չէ:

**– Եվ մեր ավանդական հարցը: Հնարավո՞ր է արդյոք իրական խաղաղություն, կամ խաղաղության որևէ պայմանագիր, եթե մի երկիրը շարունակում է որպես գերի կամ պատանդ պահել մյուս երկրի քաղաքացիներին:**

– Ադրբեջանի՝ իբրև հաղթանակած երկրի, շարունակական ամբարտավան կեցվածքը և օրեցօր աճող պահանջները չեն վկայում իրական խաղաղության ցանկության մասին: Հայաստանի գործող իշխանությունը պետք է խոստովանի, որ ամեն գնով խաղաղության հասնելը մինչև այժմ ձախողվել է: Ադրբեջանը ժամանակ է շահում՝ 2024 թվականի նոյեմբերին COP29 գագաթնաժողովի անցկացումը փրկելու համար: Դրանից հետո Ադրբեջանի վարքագիծը կախված է լինելու Հարավային Կովկասում այդ պահի աշխարհաքաղաքական հավասարակշռությունից և հեռանկարներից: ԱՄՆ նախագահի ընտրությունները և Ուկրաինա-Ռուսաստան պատերազմում հետագա զարգացումները կլինեն ուժեղ գործոններ:

Հայաստանը նույնպես պետք է օգտվի այս ժամանակից: Պետք է դադարեցնի բանակցությունները՝ հիմնվելով ներկայում գոյություն ունեցող պայմանների վրա, և ավելի շատ կենտրոնացնի իր ռեսուրսները՝ հաջորդ փուլերից առաջ երկիրը բոլոր առումներով ավելի ուժեղ դարձնելու համար:

Չի կարող տեւական խաղաղություն լինել, երբ այդ խաղաղությունը կառուցված է լինում միայն հաղթողի պահանջների վրա: Հայաստանը դրսևորել է խաղաղություն ձեռք բերելու բարի կամք, իսկ հիմա էլ Ադրբեջանի հերթն է ապացուցելու իր բարի կամքը. այս առումով բոլոր գերիների և պատանդների ազատ արձակումն լավ սկիզբ կլիներ:

//

**ԿՈՐԵԼ Է** Անհայտ հանգամանքներում կորել է Գորիս քաղաքի բնակիչ Ռուդիկ Յուրիկի Հայրապետյանի զինվորական գրքույկը՝ ԱԳ 022455: Համարել անվավեր:

Սյունյաց Երկիր

ՀԻՄՆԱԴԻՐ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ: ՏՊԱԳՐՎՈՒՄ Է 2003Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:

Գլխավոր խմբագիր՝ ՍԱՄՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

3301, Սյունիքի մարզ, ք. Կապան, Շահումյան 20/32:
(+374 91) 45 90 47
(+374 77) 45 90 47
syuniacyerkir@mail.ru
www.syuniacyerkir.am

Թղթակցությունները չեն գրախոսվում և հեղինակներին չեն վերադարձվում: Խմբագրության և հեղինակների կարծիքները կարող են չհամընկնել: Նյութերը ներկայացնել մեքենագիր վիճակում:

«ԳՈՎԱԶԴ – ԾԱՆՈՒՑՈՒՄ» բաժնում տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Հղումը «Սյունյաց երկրին» պարտադիր է: ® նշանի տակ տպագրվում են գովազդային նյութեր: Գրանցման վկայականը՝ 01Մ 000231:

Թերթը տպագրվում է «ԳԻՆԴ-ՏՊԱՐԱՆ» ՍՊԸ-ում: Հասցեն՝ 0074, Երևան, Բագրատունյաց փող., 70ա շենք

Ծավալը՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակը՝ 1010, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 14.08.2024թ.: